AZG NEW 1.QXD 1/27/2009 11:23 PM Page 1

Azg Ազգ

28 ՅՈՒՆՈՒԱՐ 2009 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 12 (4148)

ISSN: 1829-1651

Կոկորդ մաքրի՛ր, Հայաստան

ԵՄԽԽՎ-ում մեր շայնի իրավունքը թողեցին՝ պահանջելով բանտարկյալների ազատում

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստրասբուրգ

Եվրոպայի խորհուրդը չգնաց Հայաստանի պատվիրակությանը խորհրդարանական վեհաժողովում ձայնի իրավունքից զրկելու ճանապարհով, այլ նախընտրեց որոշ հանձնարարականներով ավելի ուշ ժամանակահատվածի տեղափոխել արդեն նոր հարցերի կատարման քննարկումը, մասնավորապես հիմնական շեշտադրումը թողնելով բանտարկյալներին առնչվող հարցերին:

Դրանցից առաջնային ու կարեւոր դարձավ Հայաստանի քրեական օրենսգրքի 300 եւ 225 հոդվածներում այնպիսի օրենսդրական փոփոխությունների կատարումը, որոնք հնարավորություն կտան հնարավորինս ազատվելու այդ հոդվածների քաղաքական բաղկացուցիչներից ու խմբագրել շահարկման առիթ դարձող օրենսդրական դրույթները:

Դեռեւս երեկ առավոտյան կրկին Հայաստանի կողմից ԵՄԽՎ 1609 եւ 1620 բանաձեւերի կատարման առնչությամբ համազեկուցողներ Ջոն Պրեսկոտի եւ Ժորժ Կոլոմբիեի զեկույցը, որն արդեն որոշ առաջարկված փոփոխություններով դարձավ վեհաժողովի քննարկման առարկա՝ դրան հետեւած քվեարկությամբ:

Համազեկուցողները ներկայացրին, որ Հայաստան վերջին այցելության բոլոր հանդիպումներում ընդգծվել է քր. օր.-ի 225 եւ 300 հոդվածներով մահվան մասին, եւ իշխանությունների պատասխանատվությունը՝ ստեղծված աշխատանքային խմբի շրջանակներում զբաղվելու այդ հոդվածների համապատասխան դրույթների փոփոխություններով:

Տես էջ 2

Փոխհրաձգություն Աղդամի շրջանում, կան զոհեր

ԼՂՀ պաշտպանության նախարարությունը հաղորդում է, որ հունվարի 26-ին, քաղաքացիական անձ Բաղ Վաչագանի Թադեւոսյանը, որը, համաձայն նախնական տվյալների, տառապում էր հոգեկան հիվանդությամբ, անսթափ վիճակում, Աղդամ բնակավայրի ուղղությամբ փորձ է արել շարժվելու ադրբեջանական հենակետերի կողմ: Մարտական հենակետի պայմանագրային զինծառայողների փորձը՝ կասեցնելու նրա առաջխաղացումը, հաջողություն չի ունեցել: Հակառակորդը կրակ է բացել հայկական դիրքերի ուղղությամբ: Տեղի ունեցած փոխհրաձգությունից զոհվել են վերոնշյալ Բաղ Թադեւոսյանը եւ պայմանագրային զինծառայող, 1983-ին ծնված շարքային Արկադի Շմավոնի Հակոբյանը: Նախնական տվյալներով՝ հակառակորդի կողմից եւս կան զոհեր ու վիրավորներ: Ըստ նույն տեղեկությունների՝ Բ. Թադեւոսյանի դին գտնվում է ադրբեջանական կողմում:

ԲԱՆԱԿԻ ՕՐ

Ընտրիվ հայության հավաքական կամքի, մենք արդեն ունենք կայացած բանակ

ՆԱԻԲԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Այսօր մեծ տոն է՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման 17-րդ տարեդարձը: Օր, երբ կարելի է խոսել արդեն մեր ազգային ազատագրական պայքարի ընթացքում ունեցած ձեռքբերումների, հաջողությունների մասին, որոնք անհրաժեշտ է փոխանցել եկող սերնդին:

Մեր ժողովրդի հոգեւոր զարթոնքը, որն օծվեց ազգային-ազատագրական պայքարի մյուռոնով, անմահացրեց մեր սիրասուն զավակներից շատերի կյանքը կրակի մեջ, հանուն Արցախի, հանուն մեր հայրենի հողի ազատագրման: Այդ զարթոնքն էր, որ զտեց ու երես հանեց մեր հայրենիքի իսկական նվիրյալներին, որոնք մինչեւ ատամները զինված թշնամու հարձակումներին պատասխանեցին ինքնապաշտպանական ջոկատներում կռվող ազատամարտիկների ոգու ողջ արիությամբ:

Ու մենք այսօր խոնարհվում ենք զոհված ազատամարտիկների պայծառ հիշատակի առջեւ, ովքեր իրենց արյունով պահեցին հայրենի հողը:

Տարիներ են անցել: Այսօր էլ «Ռաբլուր» պանթեոն են գնում մեր որդեկորույս մայրերը, մեր գթասիրտ, տառապած մայրերը, քանզի ամեն րոպե, ամեն պահ նրանց հոգիներն իրենց զավակների հետ են խաղաղվում:

Արցախյան գոյապայքարի ընթացքում կատարված բոլոր սխրագործությունները պետք է փոխանցվեն մատաղ սերնդին, ինչպես մեր պապերի սխրանքները փոխանցվել են մեզ:

Մեր բանակն այսօր լիովին կատարում է իր առջեւ դրված խնդիրները: Մեծ որակով առաջընթաց ենք ապրել թե՛ հետպատերազմյան վերականգնողական շրջանում, թե՛ հատկապես 2000-ից մինչեւ օրս ընկած ժամանակահատվածում:

Տես էջ 3

Թուրքիայում դարձյալ հայ է սպանվել

Ինչպես հաղորդում են թուրքական լրատվամիջոցները, դեպքը տեղի է ունեցել Ստամբուլի Շիշլիի թաղամասում գտնվող շենքերից մեկում: Տեղեկությունների համաձայն, Ասլընուր Քալենդերոլլու անունով կինը ուշ երեկոյան ներխուժել է ազգությամբ հայ, Թուրքիայի քաղաքացի, 75-ամյա Կալուս Բաբարի բնակարանը եւ դանակով կտրել նրա կոկորդը, ինչի հետեւանքով վերջինս տեղում մահացել է: 37-ամյա կինը ձերբակալված է: Սպանության դրդապատճառները ճշտվում են: Հիշեցնենք, որ օրեր առաջ դարձյալ Ստամբուլում անհայտ անձի կամ անձանց կողմից սպանվել էր Թուրքիայի հայ քաղաքացի, 56-ամյա Հարութն Ալագյոզը: Նա մահացել էր կրծքավանդակի շրջանում ստացած սուր կտրող գործիքի վնասվածքի հետեւանքով, հաղորդում է «Նոյյան տապանը»:

«Անհեւակայելի սպառնալիք Թուրքիային Իսրայելից»

Այդ մասին հունվարի 26-ի համարում գրել է Նյու Յորքի turkishny.com կայքէջը: Ինչ վերաբերում է սպառնալիքին, ապա դրա հեղինակը Կնեսետում Լիկուդ կուսակցության պատգամավոր Զեեւ Էլքինն է: Ըստ կայքէջի, հայկական մամուլին հայտարարություններ անող Էլքինն ասել է. «Անկարայի որդեգրած դիրքորոշումն ապացուցեց Հայոց ցեղասպանության ճանաչման անխուսափելիությունը Կնեսետում: Իսրայելի նորընտիր խորհրդարանը աշխատանքները սկսելու է փետրվարի 24-ին եւ մեծ է Լիկուդ կուսակցության իշխանության գալու հավանականությունը»:

Էլքինը, նկատի ունենալով Գազայի դեմ ռազմական գործողությունները դատապարտելու թուրքական կառավարության մոտեցումները, ավելացրել է. «Կնեսետում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում պնդելիս ես իրավացի էի: Մենք դա չարեցինք եւ աջակցության փոխարեն արժանացանք Թուրքիայի քննադատությանը»: Ի դեպ, շուտով Իսրայելում կանցկացվեն խորհրդարանական ընտրություններ:

Ռ. Ջ.

Լոս Անջելեսում հարձակում հայկական հեռուստաընկերության վրա

Լրագրող **Գայանե Մանուկյանը** Լոս Անջելեսից հաղորդագրություն է ուղարկել նկարագրելով, թե ինչպես են խափանվել անկախ ԱԱԲՀ հայկական հեռուստաընկերության հաղորդումները: Ըստ վերջինիս, Սարգիս Ղլյանի ուղիղ եթերի ժամանակ Գերմանիայից զանգահարել է լրագրող Համո Մոսկոֆյանը եւ պատմել AMGA, ընդդիմադիր համբավ ունեցող, հայկական հեռուստաընկերությունում իր աշխատանքի մասին, Լեւոն Տեր-Պետրոսյանի օգտին կատարվող քարոզարշավի շրջանում: Հ. Մոսկոֆյանը նշել է, որ AMGA հեռուստաընկերության ղեկավարությունը՝ Կարինե Կեոսեկյանը, Անահիտ Մարտիրոսյանը, Ռուդիկ Հովսեփյանը եւ այլք, մեծ գումարներ են ստացել «ընդդիմադիր դաշտի ղեկավարներից՝ Դավիթ Շահնազարյանից, ինչ-որ «կակաչ»-ներից, սիոնիստներից» եւ այլն: Սակայն հաղորդումը հանկարծակի ընդհատվել է, երբ անկախ ԱԱԲՀ-ի հեռուստաընկերության վրա հարձակում են գործել AMGA հեռուստաընկերության տնօրենը, Կարինե Կեոսեկյանը եւ այլք, ինչի հետեւանքով հաղորդումը ընդհատվել է եւ մոտ 15 րոպե էկրանը սեւ է եղել: Հաղորդվում է, որ «հեռուստաընկերության մոտ շատ մարդիկ են հավաքված եղել, եկել էր նաեւ Գլենդեյլի ոստիկանությունը»: Լրագրող Գայանե Մանուկյանը նշում է. «Զարմանալի ու ցավալի է, որ ժողովրդավարություն, ազատ խոսք քարոզող եւ իրենց ազատության մարտիկներ հորջորջող ԼՏՊ-ականները ամենավերջին խուլիգանի նման են իրենց դրսեւորում»:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն ընդունեց Թեհեյան մշակութային միության ներկայացուցիչներին

Ողջունելով հյուրերին, վարչապետն իր գոհունակությունն է հայտնել Թեհեյան մշակութային միությունում անցկացված միջոցառման՝ «Վահան Թեհեյան» ամենամյա մրցանակաբաշխության 2008 թ. մրցանակների հանձնման կապակցությամբ: Տիգրան Սարգսյանը նշել է, որ կառավարությունը բարձր է գնահատում Թեհեյան մշակութային միության բոլոր ձեռնարկումները: Ըստ նրա, ամենամյա մրցանակաբաշխությունը, ունենալով հայապահպան նշանակություն, միաժամանակ ուղղված է ոչ միայն Հայաստանում, այլեւ սփյուռքում հայ մշակույթի, գիտության ու արվեստի զարգացմանը:

«Թեհեյան մշակութային միության գործունեությունը հայտնի է մեր ժողովրդին: Բախտավորություն է այդպիսի հիանալի առաքելությանը մասնակցելը: Միայն ուշադրությունը նման հարցերին, մարդկանց աշխատանքը արժանիորեն գնահատելը չափազանց կարեւոր է», ասել է վարչապետը՝ ՀՀ կառավարության եւ իր անունից շնորհակալություն հայտնելով հանդիպման մասնակիցներին՝ նրանց ազգանվեր, հայանպաստ գործունեության համար:

ՀՀ վարչապետի որոշմամբ, երկարամյա ազգանվեր գործունեություն ծավալելու համար Թեհեյան մշակութային միության ԱՄՆ-ի եւ Կանադայի կենտրոնական վարչության փոխնախագահ, նույն վարչության անդամ Բաբկեն Մկրյանը, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Երվանդ Ազատյանը, Շվեյցարիայի Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Թալին Ավագյանը եւ «Թեհեյան կենտրոն» հիմնադրամի նախագահ Վարդան Ուզունյանը խրախուսվել են ՀՀ վարչապետի շնորհակալագրով: Հանդիպման ժամանակ վարչապետը շնորհավորել եւ հանձնել է պարգեւները:

Թեհեյան մշակութային միության ԱՄՆ-ի եւ Կանադայի կենտրոնական վարչության փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Երվանդ Ազատյանը ներկաների անունից շնորհակալություն է հայտնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին՝ միջոցառմանը մասնակցության համար: Նա ընդգծել է, որ Թեհեյան մշակութային միության գործունեությունը միշտ էլ եղել է հայրենատեր եւ հայրենակենտրոն: Ըստ Ե. Ազատյանի, դեռեւս խորհրդային տարիներին, Հայաստանի անկախացումից հետո՝ առավել եւս, ԹՄՄ-ն եղել է հայրենիքի հետ սփյուռքի կապի ամենաակտիվ, ամենաբանուկ կամուրջներից մեկը: Նա նշել է, որ սփյուռքում չեն պատկերացնում իրենց գործունեությունը՝ առանց Հայաստանում մշակութային եւ հոգեւոր զարգացմանը խթանող աշխատանքի՝ սերտորեն համագործակցելով նաեւ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հետ եւ քաջ գիտակցելով, որ հայ մշակույթի կյանքի աղբյուրը հայրենիքն է:

Հանդիպման մասնակիցները վստահեցրել են, որ առաջիկայում ավելի կընդլայնվի միության նախաձեռնությունների շրջանակը:

AZG NEW 2.QXD 1/27/2009 11:25 PM Page 1

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

Կոկորդ մաքրի՛ր, Հայաստան

1-ին էջից

Հեռաֆրֆրական է, որ Հայաստանի կողմից 1609 եւ 1620 բանաձեւերի կատարման մասին զեկույցի քվեարկությունից առաջ 27 ելույթի հերթագրություն կար, որից երկուսը դահլիճից բացակայում էին իրենց խոսքն արտահայտելու հերթի պահին: Մնացյալ 25-ից 4 ելույթ ներկայացրին Ռուսաստանի Դաշնության պատվիրակները, ընդգծելով, որ ձայնի իրավունքից զրկելը ծայրահեղ միջոց է ու տվյալ դեպքում ոչ կիրառական:

Պատժամիջոցի կիրառումից հրաժարվելու համազեկուցողների մոտեցումը ողջունեցին նաեւ պատվիրակներ Նորվեգիայից, Թուրքիայից, Ադրբեջանից, Բալթյան երկրներից, Ֆրանսիայից, Լեհաստանից, Խորվաթիայից, Հունաստանից, Գերմանիայից եւ այլ երկրներից: Առանձնահատուկ էր, որ որոշ դեպքերում պատվիրակներն իրենք նշեցին Եխ երկակի ստանդարտների մասին, հիշեցնելով, որ այլ՝ ավելի վաղաբար վիճակներում չեն կայացվել ձայնի իրավունքից տարբեր երկրների պատվիրակություններին զրկելու որոշումներ:

Բնականաբար, ադրբեջանական պատվիրակության ներկայացուցիչներն այնքան մտահոգ ներկայացան հայ ժողովրդին «բռնատիրությունից» ազատելու գաղափարով, ու այդ ֆոնին նրանց մշական ու արդեն ծանոթացնելու ասիճան կրկնված արտահայտությունները «օկուպացված տարածքների, միլիոնավոր փախստականների» մասին ուղղակի անհեթեթ էին հնչում: Իսկ համեմատությունները ադրբեջանական իրականության տարբեր դրվագների հետ միայն կարող են վկայել, որ ադրբեջանական պատվիրակության ներկայացուցիչները Եվրոպայի խորհրդում հստակ առաքելություն են փորձում իրականացնել եւ դրա համար ամեն սուտ միայն հնչեցնելով ջանում են հասնել որեւէ արդյունքի:

Միակ բացասական կարծիք հայտնած ըվեդ պատգամավոր Մարիետա դե Պուրբախ-Լյունդին հիշեցրեց վերջին նախագահական ընտրությունները, որոնցում տիկինը դիտորդ է եղել: Խորհրդարանականի ուրով էր ավելի շուտ զրկել Հայաստանի պատվիրակությանը ձայնի իրավունքից, քանի որ Եխ հեղինակության հարց է դառնում:

Հայաստանյան պատվիրակությունից վեհաժողովում Արմեն Ռուսամյանը նշեց, որ պետք է հստակ գնահատել տեղի ունեցածը, իրավական առումով ճիշտ գնահատել ու կտանան արդյունք: Դավիթ Հարությունյանն, իր հերթին, ընդգծեց, որ մոտ մեկ տարվա ընթացքում Հայաստանը փորձում է հաղթահարել մարտյան իրադարձությունների հետեւանքները: Ուշադրություն հրավիրեց այդ հետեւանքների հաղթահարմանն ուղղված իշխանությունների քայլերին: Ըստ Հարությունյանի, օրենսդրական նախաձեռնվող փոփոխությունները կփոփոխեն նաեւ բանտարկյալներին ներկայացվող մեղադրանքները: Ավելն Ադոնցը հավելեց, որ 1609 եւ 1620 բանաձեւերի կատարումը համընկնում է Հայաստանի շահերին, ու անելիքներն էլ դեռ շատ են: Նաիրա Զոհրաբյանի ելույթը պատմական էքսկուրս էր՝ հուզական որոշ ելեւէջներով:

1609 եւ 1620 բանաձեւերի շարունակությունը՝ 1643

Հայաստանի վերաբերյալ Եվրոխորհրդի շրջանակներում ծնվեց եւս մեկ բանաձեւ՝ արդեն թիվ 1643-ը, որին կողմ քվեարկեցին 149 գրանցված պատգամավորներից 141-ը, դեմ՝ 3-ը, ձեռնպահ՝ 5-ը: 1643 բանաձեւով ձայնի իրավունքից զրկելու հարց չի բարձրացվում, այլ կարեւորվում է, որ երկու ամսվա ընթացքում կատարվեն համապատասխան փոփոխություններ ՀՀ քր. օր.-ի 225 եւ 300 հոդվածներում:

Քվեարկությունից հետո Հայաստանի կողմից 1609 եւ 1620 բանաձեւերի կատարման հարցով համազեկուցող Զոն Պրեսկոտը «**Ազգի**» հարցին, թե ընդունված բանաձեւը համապատասխանո՞ւմ է Հայաստանում առկա իրավիճակին, պարզաբանեց, որ համազեկուցողները բազմիցս եղել են Հայաստանում եւ դրա հիման վրա գտնում են, որ բանաձեւը համապատասխանում է իրականությանը: «Այսուհետեւ կհետեւենք փոփոխություններին ու քայլերին եւ Հայաստանի հարցին կվերադառնանք պարիլին», ընդգծեց համազեկուցողը:

«**Ազգ**» հետաքրքրվեց, թե ձայնի իրավունքից չզրկելու որոշումից հետո ինչպիսին է վերաբերմունքը հայկական ընդդիմության՝ համազեկուցողների կաբառված լինելու մեղադրանքների առնչությամբ, Պրեսկոտը պատասխանեց, որ ափսոսում է դրա համար, իրենք անում են իրենց առավելագույնը: Նա ընդգծեց, որ գումարներ չի վերցնում, այլ հաշվի է առնում ու զեկույցում ներկայացրել է միայն իր անկեղծ կարծիքը, ընդ որում, այդօրինակ մեղադրանքները իրեն մի քիչ հոռետես են դարձնում:

Պրեսկոտը կարեւորեց, որ օրենսդրական սպասվող փոփոխություններին ու դրանց բերած նոր իրավիճակով պարիլին կգնահատվի արվածն ու ըստ այդմ էլ կլինի արձագանքը: «**Ազգի**» հարցին, թե որքանով է հավանական պարիլյան նստաշրջանում նորից Հայաստանի հանդեպ պատժամիջոցների կիրառմանը վերադառնալը, Պրեսկոտը արձագանքեց, որ չի ցանկանում մտնել այդ մեխանիզմների մեջ: «Ամեն դեպքում, սպասվում է, որ հայաստանյան իշխանությունները դեռ շատ անելիք ունեն՝ օրենսդրական փոփոխություններից մինչեւ դրանց արդյունքում սպասվող քայլեր»:

Արմեն Ռուսամյանն, իր հերթին, ճնշարկումից հետո հայ լրագրողների հարցերին ի պատասխան պարզաբանեց, որ մինչեւ պարիլ շատ հստակ առաջադրանք ունենք կատարելու: «Ստեղծված աշխատանքային խումբը սանձնել է շատ լուրջ պատասխանատվություն. մեկ ամսվա ընթացքում ներկայացնել փոփոխությունների առաջարկ եւ մեկ ամիս էլ տրվում է, որ այդ փոփոխությունները դառնան օրենք: Այսինքն՝ հաջորդ մոնիտորինգի նիստին, որ նախատեսված է Իսպանիայում մարտի 30-31-ին, պետք է լուրջ բան ունենանք ասելու»:

Նշելով, որ ժամկետները շատ սեղմ են, Ռուսամյանը ընդգծեց, որ հունվարի 22-ին աշխատանքային խումբ ստեղծելու որոշմանը արդեն վերադարձին կհաջորդի աշխատանքային վիճակը, քանի որ ԵԽԽՎ հայաստանյան պատվիրակության անդամներից մի քանիսը կմասնակցեն այդ խմբի աշխատանքներին:

«Համազեկուցողների առաջարկած փոփոխությունները բերեցին որոշակի բալանսի, այն վիճակը, որ կար դեկտեմբերի 17-ի որոշումից հետո (որով առաջարկվում էր զրկել Հայաստանի պատվիրակությանը ձայնի իրավունքից-Ա.Հ.), մի քիչ ծայրահեղացում էր, իրավիճակի ոչ համարժեք ներկայացում: Հարգվեց քաղաքական կամքի առկայությունը, որ ամենակարեւոր հանգամանքն է Եվրոխորհրդում: Ընդունվեց այն մոտեցումը, որ Հայաստանը չի կարող շրջանցել իրավական համակարգով խնդիրները լուծելու ճանապարհը... Միակ ճանապարհն այն է, որ 225 եւ 300 հոդվածները փոխվեն, ինչը հետադարձ ուժ է ունենալու եւ դատախազն էլ կարող է վերանայել իր մեղադրանքները», ներկայացրեց Ռուսամյանը: Ինչ վերաբերում է քաղաքական բանտարկյալներ հասկացությանը, ապա, Ռուսամյանի խոսքերով, քաղբանտարկյալ հասկացությունը չունի հստակ փաստաթղթում: «Կա կասկած, որ կարող են լինել քաղաքական շարժառիթներով ձերբակալվածներ, որը համապատասխանում է 1620 բանաձեւի ձեւակերպումներին»:

Հայաստանյան պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանն էլ կարեւորեց, որ նմանատիպ ճնշարկումներն առաջին հերթին անհրաժեշտ են Հայաստանին, ոչ թե Եվրոպային: «Չկան պարտվողներ եւ հաղթողներ: Ինձ դուր չի գալիս այն հարցադրումը, որ երբեմն հնչում է՝ արդյո՞ք համարո՞ւմ եք, որ սա հաղթանակ է: Հաղթանակը ժողովրդավարությունն է, մարդու իրավունքների պաշտպանությունը, իսկ սա ճնշարկում է եւ գործընթաց»:

Համաշխարհային բանկը կտրամադրի Հայաստանին 525 մլն դոլար

ՀԲ այլ կառույցներ այդ գումարը կարող են հասցնել մինչեւ 800 մլն դոլարի

Այս օրերին Հայաստանում գտնվող Համաշխարհային բանկի պատվիրակությունը, բանկի փոխնախագահ Շիգեռու Կաթսուի գլխավորությամբ, երեկ երեկոյան հանդիպում ունեցավ լրագրողների հետ: Ինչպես հայտնեց **Շիգեռու Կացուն**, Հայաստանի հետ գործընկերության ֆառամյա ծրագրով մեր երկրին Համաշխարհային բանկը կտրամադրի 525 մլն դոլար: Դա մոտ 2,5 անգամ ավելի է, քան 2004-2008 ֆառամյա ծրագրով ՀԲ-ի տրամադրած 220 մլն դոլարը: ՀԲ փոխնախագահի խոսքերով, գումարը տրամադրվում է Հայաստանի կողմից նախորդ ծրագրի կատարման լավ ցուցանիշները նկատի ունենալով եւ միջազգային ֆինանսական ճգնաժամին դիմակայելու Հայաստանի կառավարության ջանքերին աջակցելու նպատակով: Շիգեռու Կացուն հայտնեց, որ ՀԲ տարբեր կառույցներ նույնպես Հայաստանին կհատկացնեն վարկային միջոցներ, բանկի կողմից տրվող գումարը առաջիկա 4 տարիների համար հասցնելով 800 մլն դոլարի: Մասնավորապես տեղեկացվեց, որ տարեկան 50 մլն դոլար մասնավոր հատվածի զարգացման համար կտրամադրի միջազգային ֆինանսական կորպորացիան: ՀԲ փոխնախագահը տեղեկացրեց, որ բանակցությունների փուլում է գտնվում 5 ծրագրերի ֆինանսավորումը, որից 3-ը ուղղված կլինի գյուղատնտեսությանը, 1-ը փոքր եւ միջին ձեռնարկատիրությանը (ՓՄՁ) եւ 1-ը՝ բնապահպանությանը:

ՀԲ Հարավային Կովկասի տարածաշրջանային նախկին տնօրեն Դոննա Դոուսեթ Կուելյոն նշեց, որ տրավորված է այն առաջընթացով, որ Հայաստանը գրանցել է անցած 4 տարիների ընթացքում: Նա նաեւ գոհունակություն հայտնեց կառավարության բարեփոխումների նոր ռազմավարությունից: Նրան Հարավային Կովկասի տարածաշրջանի տնօրենի պաշտոնում փոխարինող **Ասադ Ալամը** պահը վճռորոշ համարեց ոչ միայն այն պատճառով, որ Հայաստանը նույնպես դիմագրավում է միջազգային ճգնաժամի ազդեցությանը, այլ որովհետեւ տեղափոխվում է միջին եկամուտ ունեցող երկրների խումբ:

Այն հարցին, թե ի՞նչ վերաբերմունք ունեն Հայաստանի վարչապետի տեսակետին, որ Հայաստանը անցնում է անցել միջազգային ֆինանսական ճգնաժամի առաջին փուլը, Շիգեռու Կացուն պատասխանեց, որ նկատի ունենալով ճգնաժամի՝ ֆինանսական հատվածից սկսվելը եւ Հայաստանի ֆինանսական հատվածի վրա դրա ազդեցության բացակայությունը, վարչապետն իրավացի է: Սակայն, ըստ ՀԲ փոխնախագահի, ճգնաժամի երկրորդ փուլն արդեն ազդել է արտահանման ուղղվածություն ունեցող մեր ձեռնարկությունների, մասնավորապես հանքարդյունաբերության վրա: Բացի այդ, նրա կարծիքով, ճգնաժամը կազդի նաեւ դեպի Հայաստան եկող մասնավոր փոխանցումների վրա:

Հայաստանի մասին բացասական գնահատականի ակնկալիքով տրված մեկ այլ հարցի, որն առնչվում էր մեր երկրի մրցունակությանը, Շիգեռու Կացուն պատասխանեց, որ այն, ինչ տեսնում ենք Հայաստանում, տեղի է ունեցել Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի բազմաթիվ երկրներում: Այն է՝ տնտեսական աճի արդյունքում բարձրանում է բարեկեցությունը, ավելացնելով ներմուծման պահանջարկը: Վերջինս ավելի արագ է աճում, քան տվյալ երկրի արտահանման ներուժը: Ըստ ՀԲ փոխնախագահի, տարածաշրջանի 29 երկրների մեծ մասում սկսեց արձանագրվել առեւտրի բացասական տարբերության ավելացում եւ Հայաստանում իրավիճակը շատ չի տարբերվում այլ երկրներից:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍԱՐՈՍ

Կորել է Ստեփան Շահումյանի աճյունը

Բաքվում 26 կոմիսարների հուշահամալիրի տարածքում իրականացվող պեղումների ընթացքում հայտնաբերվել է միայն 23 աճյուն: Գերեզմանում, մասնավորապես, չկա Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ստեփան Շահումյանի աճյունը: Բաքվի կոմիսարների աճյունները քաղաքային գերեզմանատներից որեւէ մեկը տեղափոխելու որոշումը ընդունվել էր անցած տարվա ամռանը: Արբեջանցի պատգամավոր Նասիբ Նասիբլին, մեկնաբանելով այդ սենսացիոն հաղորդագրությունը, հիշեցրել է անցած դարի 80-ական թվականների կեսի հրաղարակումները, որոնցում խոսվում էր, թե անգլիացիները գնդակահարել են ոչ բոլոր կոմիսարներին: «Մասնավորապես, չեն գնդակահարվել Ստեփան Շահումյանը եւ մի քանի ուրիշ հայեր. նրանք տեղափոխվել են Հնդկաստան, որն այն ժամանակ Մեծ Բրիտանիայի գաղութն էր, եւ վախճանվել են այնտեղ իրենց մահով», հայտարարել է պատգամավորը: Սակայն պատմաբանները եւ Բաքվի կոմիսարների հարազատները այդ վարկածը անհաստատելի են համարում: «Դա մի լեգենդ է, որ ի հայտ է եկել հայ-ադրբեջանական հակամարտության ժամանակ», հայտարարել է ՌԳԱ Արեւելագիտության ինստիտուտի հնդկական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, Բաքվի ժողկոմխորհի նախագահի թոռնուհի Տատյանա Շահումյանը: «Զբաղվելով այդ վարկածի հետազոտությամբ պատմաբանները, մասնավորաբար արեւելագետ-հնդկագետ Լեոնիդ Միտրոխինը, ապացուցել են, որ ընդհանուր ոչինչ չունի իրականության հետ»: «Ստալինը ատում էր պարիս: Իսկ 1937-1938 թվականների բռնությունների շրջանում Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի այն ժամանակվա քարտուղար Բաղիրովը Մոսկվա էր գալիս, պահանջելով բռնադատել մեր ընտանիքին, որին փորձում էին ներկայացնել որպես ադրբեջանական ժողովրդի թշնամիներ: Երկրորդ ժամանակաշրջանը, երբ աճյունների հետ կարող էր ինչ-որ բան կատարվել, հայ-ադրբեջանական հակամարտության սրումն էր 80-ական թվականներին», նշել է Տատյանա Շահումյանը, հաղորդում է «Նոյյան տապանը»:

Ամփոփվում են Համահայկական բանկի ղեկավարի մրցույթի արդյունքները

Համահայկական բանկը կսկսի գործել առաջիկա ամիսներին: Ներկայում ամփոփվում են այդ ֆինանսական կառույցի ղեկավարի մրցույթի արդյունքները: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրեց Կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Զավադյանը**, նոյեմբերի 15-ից հունվարի 15-ն անցկացված մրցույթում ստացված բազմաթիվ հայտերը ճնշարկման փուլում են: Ղեկավարի ընտրությանը կհաջորդի բանկի ղեկավարության ձեւավորումը, կառույցը կլրացվի համապատասխան փորձագետներով: Ա. Զավադյանի խոսքով՝ Համահայկական բանկի ստեղծման հիմնական նպատակներից են համահայկական ծրագրերի ֆինանսավորումը եւ աջակցումը Հայաստանի Հանրապետության համար գերակա ճանաչված ծրագրերին, որոնք ներգրավված են ՀՀ կառավարության երկարաժամկետ հեռանկարային ծրագրում: Բանկի ձեւավորման կազմակերպական փուլի ավարտից հետո դրանք կսկսեն ֆինանսավորվել:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՆՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են
համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 1/27/2009 10:45 PM Page 1

300 խոշոր հարկատուներ. տեղափոխություններ առաջատար տասնյակում

Պետեկամուտների կոմիտեն երեկ **«Ազգում»** հրապարակեց 2008-ի 12 ամիսների առաջին 300 խոշոր հարկատուների ցանկը եւ նրանց վճարած հարկերի չափը: Առաջին իսկ հայացքից աչքի է ընկնում միջազգային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունն այդ ցանկի վրա, քանի որ հանքարդյունաբերության ոլորտի եւ մի շարք այլ խոշոր ընկերությունների վճարած հարկերը նվազել են: Սակայն մյուսների մոտ էլ հարկային մուտքերի նկատելի ավելացում է արձանագրվել: Փոփոխություններ են կատարվել նաեւ առաջատարների ցանկում:

Տարվա արդյունքներով Հայաստանի ամենախոշոր հարկատուն «Ռ-Տելեկոմ» («Վիվասել-ՍՍՍ») ընկերությունն է՝ 30,7 մլրդ դրամ վճարած հարկերով: Արժե ընդգծել, որ նախորդ 2007-ի (15,5 մլրդ դրամ) համեմատ, «Ռ-Տելեկոմի» վճարած հարկերը կրկնապատկվել են, իսկ ընկերությունը 2007-ի 4-րդ տեղից բարձրացել է առաջին տեղ: Այս ընկերությունը փայլուն ապացույց է, թե ինչպես կարելի է աշխատել օրինական դաշտում, հաջողությամբ մրցակցել, միաժամանակ իրականացնելով մեծածավալ բարեգործական ծրագրեր: Դա մեծապես պայմանավորված է ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի պրոֆեսիոնալ եւ մարդկային հատկություններով:

Երկրորդ խոշոր հարկատուն 2008-ին «Հայռուսգազարդն է», որը վճարել է 17,8 մլրդ դրամ: Այս ընկերության վճարած հարկերը մոտ 2 մլրդ դրամով պակաս են նախորդ տարվա ցուցանիշից: 2007-ին երրորդն էր 300-ի ցանկում: 2008-ին երրորդ տեղում «Արմենտելն» է՝ 15,1 մլրդ դրամ վճարած հարկերով: 2007-ին այս ընկերությունը երկրորդն էր եւ նրա հարկերի ցուցանիշը նույնպես նախորդ տարվա համեմատ նվազել է ավելի քան 5 մլրդ դրամով:

Երկար տարիներ, այդ թվում նաեւ 2007-ին, Հայաստանի թիվ 1 խոշոր հարկատու «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը» այս անգամ 4-րդն է եւ վճարել է 14,3 մլրդ դրամ: Հասկանալի պատճառներով այս ընկերության վճարած հարկերն ավելի քան կրկնակի նվազել են անցյալ տարվա (33,6 մլրդ դրամ) նկատմամբ: 5-րդը «Ալեֆ գրիգ» ընկերությունն է: Աժ պատգամավոր Սամվել Ալեքսանյանին պատկանող այս ընկերությունը վճարել է 12,5 մլրդ դրամ: Նշենք, որ նրան պատկանող մեկ այլ «Սալեֆ գրուպ» ընկերությունը վճարել է 1,8 մլրդ դրամ: Փաստորեն, եթե համեմատենք այս ցուցանիշները «Սալեֆ գրուպի» 2007-ին («Ալեֆ գրիգը» դեռ չէր ստեղծվել) վճարած 9,1 մլրդ դրամի հետ, ապա 2008-ին Սամվել Ալեքսանյանի վճարած հարկերն ավելացել են ավելի քան 5 մլրդ դրամով: Միաժամանակ, հարկ է ընդգծել նույն «Ալեֆ գրիգի» վճարած շահութահարկի չնչին լինելը՝ 21 մլն դրամ: Դա պայմանավորված է օրենքի ընձեռած շահութահարկի արտոնությունից (տրված 1 մլն դոլար եւ ավելի օտարերկրյա ներդրում ունեցող ընկերություններին), որի ժամկետը, բարեբախտաբար, անցյալ տարի ավարտվեց: Այսինքն, այս տարի որեւէ ընկերություն այլեւս չի կարող օգտվել օրենքի սողանցքից եւ խուսափել շահութահարկ վճարելուց:

Վառելիք ներմուծող խոշոր ընկերությունները՝ «Քաղպետրոլսերվիսը» եւ «Ֆլեքը» զբաղեցնում են 6-րդ եւ 7-րդ տեղերը: Առաջինը վճարել է 11,4 մլրդ դրամ, երկրորդը՝ 10,4 մլրդ դրամ: Երկու ընկերությունների վճարած հարկերն էլ ավելացել են՝ «Քաղպետրոլսերվիսինը» 1,4 մլրդ դրամով, «Ֆլեքինը»՝ 800 մլն դրամով: «Հայկական երկաթուղին», որը նախորդ տարի բացակայում էր խոշոր հարկատուների առաջին տասնյակում, այժմ 8-րդն է եւ վճարել է 5,8 մլրդ դրամ: Եվս 2,7 մլրդ դրամ էլ վճարել է տարվա ընթացքում վերափոխված ու այլ անվանում ստացած նույն ընկերությունը՝ «Հարավկովկասյան երկաթուղին»: «Հայաստանի էլեկտրական ցանցերը» 9-րդն է՝ 5,2 մլրդ դրամով:

Առաջին տասնյակը եզրափակում է «Գրանդ տոբակոն»՝ 4,5 մլրդ դրամով, ապա գալիս է Հրանտ Վարդանյանին պատկանող մյուս ընկերությունը՝ «Ինտերնեյշընլ Մասիս տաբակը»՝ 3,7 մլրդ դրամ: Նույն գործարարին պատկանող «Գրանդ ֆենդին» վճարել է 1,9 մլրդ դրամ: Այս գործարարին պատկանող ընկերությունների ընդհանուր վճարած հարկերը կազմում են ավելի քան 10 մլրդ դրամ, որը մոտ 1 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: Իսկ եթե դրան ավելացնենք «Գրանդ Հոլդինգի» կազմի մեջ մտնող այլ ձեռնարկությունները եւս, ապա 2008-ին նրանց ընդհանուր վճարած հարկերը կկազմեն միասին 11 մլրդ 426 մլն դրամ:

Մեկ այլ խոշոր գործարարի՝ Գագիկ Ծառուկյանին պատկանող «Արա Մարտիրոսյան

Ընդհանուր հայության հավաքական կամքի, մենք արդեն ունենք կայացած բանակ

1-ին էջից

Բանակը հասարակության ամենազգայուն մասն է: Ուստի ժամանակակից բանակներին բարոյական բարձր, ոգեշնչված վիճակն ավելի անհրաժեշտ է, քան բոլոր նախորդներին:

Չի կարող ուժեղ բարոյական ոգի լինել այնտեղ, որտեղ չկա վստահություն սեփական ուժերի նկատմամբ: Լավ զինված ու մարզված զինվորը, բնականաբար, ինչպես բարոյական, այնպես էլ ֆիզիկական տեսակետից կզգա իր առավելությունը վատ մարզված եւ վատ զինված հակառակորդի նկատմամբ: Ու այսօր հայ զինվորին ամենից առաջ պետք է համոզել, որ առանց անհրաժեշտության իր ազատությունը չի սահմանափակվի եւ ոտնահարվի: Ծառայությունը նրանից մեծ ճշմարտություն է պահանջում, եւ նա իրավունք ունի ակնկալելու հենց այդպիսի ճշտապահություն:

Հայոց պետականաշինության թիվ մեկ օրակարգային հարցը շարունակում է մնալ պաշտպանական համակարգի ամրապնդումը: Համակարգ, որի գլխավոր, բայց ոչ միակ օղակը բանակն է:

Զինվորին է վստահված իրականացնելու ամենավեհ առաքելությունը՝ հայրենիքի պաշտպանությունը: Եվ զինվորականին հենց այս հատկանիշներն են, որ վճռական պահերին օգնության են հասնում պատերազմի դաշտում՝ այնտեղ, որտեղ եւ ամենածայրահեղ պայմաններում այնքան ցայտուն կերպով ընդգծվում են բոլոր մարդկանց բոլոր որակները: Վերջերս հնչող ռազմատենչ հայտարարությունները, պատերազմի վերսկսման մասին շրջանառվող լուրերը լսելիս պետք է հիշել, որ ի վերջո պարտադրված պատերազմը ընդունել ենք պարզ ճակատով եւ շնորհիվ ազգային համախմբվածության դուրս ենք եկել միշտ պատվով: Ու բանակի մարտունակության բարձրացման ամենագլխավոր ու թերեւս անփոխարինելի գործոնը եղել ու մնում է ազնիվ գաղափարներով թրծված եւ իր ծառայողական ու մասնագիտական պարտականություններին լավագույնս տիրապետող զինվորը:

Եթե փորձենք հետ գնալ հայոց պատմության հոլովույթի ընթացքով, ապա դժվար չէ համոզվել, որ հաղթանակները հայոց բազմադարյան գոյապայքարի մերօրյա թագուպսակն են: Հինավուրց Արցախի նորագույն ազատամարտը հայ զինվորի սխրանքի ու հերոսության դրվագներից է: Նվաճված հաղթանակների մղիչ ուժը եղել է իմացյալ մահով անմահանալու, ազգն ու երկիրն անմահացնելու պատրաստակամությունը: Եվ այս գիտակցությամբ առաջնորդվել են մեր ժողովրդի բոլոր շերտերը: Այս իսկ իմաստով էլ դարաբաղյան ազատագրական պատերազմը հայ ժողովրդի միաբանության ու հավաքական կամքի պայծառ արտահայտությունն է:

Այսօր մեր հայոց բանակի 17 գարուններն ապրած տոնն է: Առաջընթացը, որ ապրում ենք, նաեւ բանակում իրականացվող բարեփոխումներն են՝ միջոցառումներ, որոնք ամփոփելու են ձեռք բերված արժեքները, եւ որոնք խելացի կերպով իրականացնելու դեպքում անպայման իրենց նպաստը կբերեն ՀՈՒ զարգացման կատարելագործման գործին:

Մեր միասնության ձգտումը, մեր բաղձանքներին տեր կանգնելը, մեր սերնդի հերոսությունը մեր հարատեւության ու նոր հաղթանակների գրավականն են: Մեր միասնության, իմաստնության, բռունցքվել կարողանալու եւ ինքնազոհության շնորհիվ միշտ ձեռք ենք բերել հաղթանակներ, իսկ անմիաբանության, հարստանալու տենչի, ամեն ինչ սեփական ես-ին ծառայեցնելու, պետականության կորուստ, հզոր տերությունների շահերի բախման դեպքում, երբ մոռացել ենք մոտ ու հեռավոր անցյալի դասերը, մեր պարտականությունները, ունեցել ենք կորուստներ, անկումներ:

Հազար փառք արցախյան ազգային-ազատագրական պայքարում զոհված մեր որդիներին...

Փառք մեր որդեկորույս մայրերին, որոնք մեր նախամայրերից ժառանգել են հոգու արիություն, լույս ու լավատեսություն եւ քայլում են ազգի վերելքին համընթաց, դեպի հավերժություն:

Եվ ինչպես մեր բանակի հրամանատարն է ասում. «Պահպանենք մեր բանակը ի երախիտք մեր ազգի անվտանգության»:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

«Կա՛մ Ղավախքը դառնում է Ղարաբաղ, կա՛մ հարցերը լուծվում են հայ-վրացական համագործակցության պայմաններում»

Մոտավորապես մեկ շաբաթ առաջ Ախալքալաքայում տեղի ունեցած 2 հայ երիտասարդների՝ Գրիգոր Մինասյանի եւ Սարգիս Հակոբջանյանի ձերբակալությանն ու Հայաստանի իշխանությունների կողմից տարվելիք գործընթացներին երեկ «Հայելի» մամուլի ակումբում անդրադարձան «Ղավախք» հայրենակցական միության նախագահ, Աժ պատգամավոր **Շիրակ Թորոսյանն** ու ԵՊՀ-ի հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող **Հայկազուն Ալվրցյանը**: Շիրակ Թորոսյանը Վրաստանից վերադարձել է 2 օր առաջ, իր խոսքերով՝ հետեւել է գործընթացին եւ ճշտել մանրամասները:

«Ձերբակալվել են լրտեսության մեղադրանքով: Ո՞ւմ օգտին էին լրտեսում այդ մարդիկ, որտե՞ղ է նրանց ռազմականացված կազմակերպությունը: Որտե՞ղ է նրանց զինանոցն ու վերջապես որտե՞ղ են փաստերը, որոնց հիման վրա նրանց ձերբակալել են: Փաստեր չկան: Սակայն նպատակը մեկն է՝ որպեսզի Ախալքալաքում գլխավոր հայերի նախաձեռնած հասարակական գործունեությունը, որպեսզի խորանա վախի ու սարսափի մթնոլորտը», նկատում է Շիրակ Թորոսյանը:

Ավելին պարզաբանել Թորոսյանին չի հաջողվել, որովհետեւ տեղեկություն չի տարածվում ձերբակալությունների պատճառների ու հիմնավորումների վերաբերյալ: Հայտնի է միայն, որ դատարանը 2 ամիս ժամկետով նախնական կալանքի որոշում է կայացրել:

Հայկազուն Ալվրցյանն էլ խորհուրդ տվեց կատարվածը լավ ըմբռնելու համար վերհիշել վերջին ժամանակաշրջանում Ղավախքում գործող հասարակական-մշակութային կազմակերպությունների խորհրդի աշխատանքը: Ըստ նրա, այդ կոմիտեն շատ ճիշտ սկզբունքներով էր աշխատում՝ համապատասխանելով սահմանադրության տառին ու ոգուն: Սա վրացական իշխանությունների լրջորեն մտահոգած քայլն է: Թբիլիսիից գալիս են ոստիկանության հակահետախուզության բաժնի աշխատակիցներ, հետեւաբար քաղաքական հարցն ուզում են քրեականացնել»:

Հայկազուն Ալվրցյանը նշում է, որ դրան նպաստեց նաեւ վերջին ժամանակահատվածում հայ-վրացական կրթերի շիկացումը՝ կապված հայկական եկեղեցիների եւ գերեզմանների հետ: Պատմաբանը նկատում է, որ իշխանությունը խորամանկ քայլ է կատարում՝ ընդդիմության ու ժողովրդի ուշադրությունն ուղղորդելու Ղավախքի խնդրի վրա, որպեսզի որոշակի ժամանակահատվածով մոռացության մատնվի Աբխազիայի եւ Հարավային Օսիայի պրոբլեմը: Այս դեպքում գլխավոր հարցն, ըստ հայագետի, համապատասխան հակահարված մտակելն է:

Եթե «Երկիր» հայրենակցական միության նախագահ Սեւակ Արծրունին նախօրեին վստահեցնում էր, որ խնդիրը չպետք է լուծվի Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունների մակարդակով, հարցի կարգավորմամբ ավելի շատ պետք է մտահոգություն հայտնեն սփյուռքում տեղակայված միջազգային կազմակերպություններն ու ավանդական կուսակցությունները, ապա Շիրակ Թորոսյանը նշում է, որ Հայաստանի կառավարությունն ու հատկապես ԱԳՆ-ն եւ սփյուռքի նախարարությունները բազմաթիվ անելիքներ ունեն: Թորոսյանը զրուցել է իշխանությունների ներկայացուցիչների հետ, եկել են ընդհանուր հայտարարի, սակայն դեռեւս որեւէ գործընթաց չի իրականացվել:

«Ղավախահայության խնդիրները պետք է դառնան հայ-վրացական միջկառավարական հարաբերությունների օրակարգի առաջին հարցը: Արձագանքն ուշացել է: Առաջին հերթին պետք է արձագանքեին արտաքին գործերի նախարարությունն ու իշխանության բարձրագույն մարմինները: Ընդհանրապես Ղավախքի հիմնախնդիրների հետ կապված Հայաստանը պասսիվություն է ցուցաբերում: Հիմնականում նշում են, որ Հայաստանը արտաքին աշխարհի հետ կապը պաշտպանում է միայն Վրաստանի շնորհիվ: Եթե Ղավախքում ակտիվություն ցուցաբերենք, վնասենք, վիրավորենք վրացիներին, ապա կվտանգենք մեր ճանապարհները: Մինչդեռ սա սխալ մոտեցում է»: Աժ պատգամավորը վստահ է, որ հայերն այդպես էլ լիարժեք չգիտեն Ղավախքի հիմնախնդիրների մասին: «Ղավախահայերը ցանկանում են օգտվել մարդկային տարրական իրավունքներից: Նրանք ցանկանում են խոսել մայրենի լեզվով, սակայն վրացական իշխանությունները սպառնում են, որ եթե ջավախահայերը խոսեն հայերեն՝ ապա աշխատանքի չեն ընդունի: Մինչդեռ նրանց չեն տրամադրում պայմաններ՝ վրացերեն ուսանելու համար»: Նա վստահ է, որ ուժեղ Ղավախքը կարող է դառնալ հայ-վրացական բարեկամությունների երաշխիք:

Թեպետ Հայաստանի եւ Վրաստանի նախագահների հանդիպման ժամանակ որոշվեց, որ Վրաստանից Հայաստանի սահմանը հատելու գործընթացը պետք է զբաղեցնի ընդամենը մի քանի րոպե, Թորոսյանը ներկայացրեց հակառակ իրավիճակը. «Իրողությունը սարսափելի է: 20 աստիճան ցրտի պայմաններում մարդիկ ստիպված են մի քանի ժամ կանգնել, որովհետեւ անցակետի համակարգիչը կախվել է, կամ այլ ավելի պարզ պատճառաբանություններ են հորինում, ինչի պատճառով արհեստական հերթեր են գոյանում: Երկու պետությունների միջեւ ստեղծվել է հանձնաժողով, որի անդամները պարբերաբար հանդիպում են, խնդիրներ քննարկում: Սակայն երբեւէ չի քննարկվել Ղավախքի հիմնախնդիրը: Կիսապռաս պայմաններով Ղավախքի հարցը չի լուծվի: Միայն ուժեղ Ղավախքը կարող է լինել հայ-վրացական բարեկամությունը կամրջող օղակ: Հիմնախնդրի խորացմամբ ձեռք ենք բերում նաեւ հայ-վրացական հարաբերություններում անկում: Վրաստանին չի հաջողվի հայաթափել Ղավախքը: Այն Նախիջեւան չի դառնալու: Մնում է երկու ճանապարհ՝ կամ Ղավախքը դառնում է Ղարաբաղ, կամ Ղավախքի հարցերը լուծվում են հայ-վրացական համագործակցության պայմաններում», եզրափակեց Թորոսյանը:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW 4.QXD 1/27/2009 10:40 PM Page 1

ԱՄԲԻՈՆ

Խանութպանները դժգոհում են ՀԴՄ կտրոնների քչությունից

«Հո Սովետի ժամանակները չեն, երբ զուգարանի թուղթը 5 հատից ավել չէին տալիս»

ՀՀ կառավարության որոշմամբ հունվարի 1-ից գործողության մեջ է մտել հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) կտրոններով վաճառքի հանձնումը:

«**Ազգը**» փորձեց Երևանի տարբեր թաղամասերում գործող մանր ու միջին խանութների տնօրեններից պարզել, թե ի՞նչն էր պատճառը, որ գնորդներին չէին տրամադրում գնված ապրանքի կտրոնը կամ էլ տալիս էին միայն պահանջելու դեպքում, եւ արդյոք նոր վիճակախաղային կտրոններով աշխատելը օգնո՞ւմ, թե վնասում է իրենց գրպանին:

Տնօրենները դժկամությամբ էին խոսում, ու երբ խոսացողի չհրապարակել անունները, հասցեները, սկսեցին իրենց հոգում կուտակված զայրույթը ներկայացնել: Մեր զրույցին միացավ տնտեսագետ, ֆինանսիստ-հաշվապահ ու դժգոհեց. «Այն հարկային օրենքները, որ ընդունում են, մասնագետս անգամ չեմ հասկանում, ինչո՞ւ պարզ ու հասկանալի ձեւով չեն գրվում օրենքները: Չէ՞ որ ոչ բոլորն են բարձրագույն կրթությամբ ու ոչ բոլորը հնարավորություն ունեն լավ հաշվապահ պահելու՝ հատկապես փոքր խանութներում: Կարդում ես օրենքները, բան չես հասկանում: Պրակտիկորեն անհնար է այդպես աշխատել: Երբ անհասկանալի հարցերի պարզաբանման համար դիմում ես հարկայինի աշխատակիցներին, նրանք էլ չեն կարողանում պարզեցված որեւէ փաստաթուղթ տրամադրել»:

Տնօրեններից մեկը կտրոններով վիճակահանության մասին այսպես արտահայտվեց. «Մենք դեռ տաք ենք ու չգիտենք, թե մեզ ինչ է սպասում: Միայն կարող եմ ասել, որ նման վիճակահանություն անցկացնելը ոչ մի խաղախիթ երկրին պատիվ չի բերում: Եթե ինչ-որ երկրում կամ խաղաքում նման բան կիրառվում է, չի նշանակում, որ մենք էլ պետք է դա ընդունենք ու հավասարվենք նրանց: Խոսենք հենց նախկին կտրոններից, որոնց տրցակը շատ հաստ էր ու շատ ավելի կտրոններ էր պարունակում, դրա արժեքն էր 170-190 դրամ, իսկ հիմա կտրոնների տրցակը բարակել է, կտրոնը ավելի երկար է տրվում (գրեթե 2 անգամ) եւ դրա արժեքը 350 դրամ է: Փաստորեն այժմ ընդամենը մեկ հոգի է ներկրում դրանք եւ վաճառում բոլոր խանութներին 1/5 հարաբերությամբ՝ շահ ստանալով: «Ալեքսեմ» ՍՊԸ-ն, որը ներկրում է այդ կտրոնները, արդեն պարզ է, որ դրանից ստացած գերշահույթով կլուծի նաեւ հարկերի հարցը: Իսկ ինչ վերաբերում է կտրոններ չտրամադրելուն, ապա ոչ մի տնտեսվարող սուբյեկտ չի կարող լիարժեք գործել, եթե բոլոր գնորդներին անխիր տրամադրի կտրոն: Նման գործառույթ 1-2 ամսից հետո ստիպված կլինի փակել խանութը, օբյեկտը եւ դեռ իր ունեցածը վաճառել՝ հարկային պարտքերը մարելու համար»:

Մի քանի խանութպաններ դժգոհում էին, որ հենց փոքր ու միջին խանութների կողքին սնկի պես աճում են «Սթար», «Երեւան սիթի» եւ այլ սուպերմարկետները, որոնք մեծ վնաս են հասցնում իրենց, ու կտրուկ նվազել է գնողունակությունը. այժմ 35-40 տոկոսով ապրանքաշրջանառությունը պակասել է: «Սուպերմարկետները հասարակ առեւտրով չեն զբաղվում, ավելացրեց Նոր Նորքի խանութի մի վարիչ ու պարզաբանեց, դրանց բոլոր տերերը ներդրումներ են եւ իրենց խանութներում ապրանքը վաճառում են մեծածախ վաճառքի գներով: Այսինքն, փոքր խանութներին ինչ գնով ապրանքը բաց են թողնում, նույն գնով էլ իրենց մոտ մանրածախ վաճառք են իրականացնում: Դեռ ավելին, ժամանակ առ ժամանակ որոշ ապրանքներ ավելի ցածր գներով են վաճառում ու դրանով ստեղծում են մոնոպոլիա: Իսկ գնորդը վազում է սուպերմարկետ: Օրինակ՝ 500 գր. «Սարի մածունը» («Աշտարակ կաթ») փոքր ու միջին խանութներին տրվում է 200 դրամով, իսկ ինքը վաճառում է 195 դրամով: Իսկ թե ինչպե՞ս է վերադարձնելու 5 դրամը, պարզ չէ, չկա լուսա, չկա նաեւ 5 դրամի վերադարձի լուծումը, հետեւաբար կլորացնում են թիվը՝ 200 դրամ: Ստացվում է, որ գնորդը միշտ վճարում է 200 դրամ, 195-ի փոխարեն: Իսկ մանր ու միջին խանութը 200 դրամանոց մածունին ավելացնում է իր տոկոսը՝ 10 դրամ եւ վաճառում 210 դրամով: Նույնը կարող եմ ասել նաեւ «Ջերմուկի» համար՝ 130 դրամով գործարանը բաց է թողնում մեծ խանութներին, իսկ փոքրերին՝ 140, 150 դրամ...»:

Վերջապես անդրադառնալով, թե ինչո՞ւ են խանութի տերերը թաքցնում իսկական շրջանառությունը, ի՞նչն է պատճառը, 6 բաժնից բաղկացած խանութի տնօրենը պարզաբանում է. «Եթե, ասենք, մեկ ամսում միջին խանութը ունի 9 միլիոն ապրանքաշրջանառություն, ապա այդ 9 միլիոնից 315.000 դրամը պարզեցված հարկն է, 500.000 դրամը՝ աշխատավարձը (13 աշխատող), 140.000 դրամը՝ սոցվճար, 180.000 դրամը՝ հոսանքի վարձ, 50-80.000 դրամը՝ հեռախոսի, ջրի եւ մանր-մունր վճարներ՝ ըստ տարվա եղանակի: Ստացվում է 1 միլիոն 205 հազար: Մնացածը գնում է ապրանքների կանխիկ վճարը՝ ժամանակին ու որակյալ ապրանք մատակարարելու համար, իսկ տակը արդեն ոչինչ չի մնում, ու տնօրենը ստիպված է կամ մախինացիայի դիմել, կամ թաքցնել կտրոններն ու շրջանառությունը հենց հարկային մարմիններից, որ չգան ու վարչական տուգանք գանձեն»:

Մեկ այլ տնօրեն առաջարկեց. «Մի շարք երկրներում գոյություն ունի «հարկ վաճառքից» հարկատեսակը, որի ընթացքում հարկային տեսչություն-հարկատու հարաբերությունները զրոյանում են, որովհետեւ պետությունը հարկ ունի տվյալ ապրանքատեսակի վրա ու նրան բացարձակապես չի հետաքրքրում, թե հարկատուները ինչպես են աշխատում, ու այդ հարկը ՀԴՄ սարքը ավտոմատ ձեւով խփում է կտրոնի վրա: Ինչո՞ւ հենց այդպիսի ծրագիր չեն դնում ՀԴՄ-ների վրա, որ հարկատուներին ավելորդ գլխացավանքից ազատեն: Չնայած մենք անցել ենք շուկայական հարաբերությունների, սակայն հարկային մարմինները դեռ մեզ վրա պլան են դնում: Դա պարզապես աբսուրդ է... Ստացվում է, որ ապրում ենք այնպիսի մի երկրում, որտեղ ֆինանսական հարաբերությունները կատարվում են հրահանգներով ու պլանային միջոցներով, այլ ոչ թե շուկայական հարաբերություններով: Մեկ էլ տեսար, խանութ կգա հարկային տեսուչն ու կսիրի արդեն մուծած գումարի չափը դարձնել կրկնակի, թե ի՞նչ կարգով, ինչի՞ համար... Եթե չվճարես՝ ինչ ասես չեն հնարի ու հարկատուին կնեղեն, ու երկուսի միջեւ կառաջանա մի խոր անդունդ, որը հնարավոր կլինի միայն կանխիկ գումարով «ծածկել»: Այսօրվա գործող հարկային տոկոսներով, այն էլ ոչ հավասար հարկային դաշտում, հնարավոր չէ աշխատել ազնիվ, վճարումները անել ու գոյատեւել: Դա հնարավոր բան չէ: Եվ հենց դա է պատճառը, որ ամեն մեկը մի հնար է գտնում շրջանցելու օրենքը»:

Զրուցակիցներս պնդում էին, որ «յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի ղեկավար ցանկանում է հանգիստ աշխատել, գիշերը հանգիստ քնել, աշխատանքից հաճույք ստանալ ու ոչ մեկից չվախենալ, հպարտանալ, որ իր երկրի բարեխիղճ հարկատու է, սակայն չեն թողնում, որ մեր երազանքը իրականանա»:

Մեկ այլ տնօրեն, որը մոտ 3 ժամ հերթ էր կանգնել նոր կտրոնների տրցակ ստանալու համար, վիրավորված ու վրդովված ավելացրեց. «Իմ խանութին տվեցին 5 տրցակ՝ 3 ՀԴՄ-ի համար, ու 10 օրից հետո կտրոնները վերջացան: Նոր կտրոնների համար ստիպված զուր ժամեր կորցրի: Ինչո՞ւ միանգամից չեն տալիս շատ, հո Սովետի ժամանակները չեն, որ զուգարանի թուղթը 5 հատից ավելի չէին տալիս: Հաճախորդներն ամեն մի ապրանքի համար առանձին կտրոն են ուզում, եւ պարզ է, որ շատ ժամանակ է օգտագործվում ու շուտ էլ վերջանում է: Դեռ մի բան էլ՝ օրվա վերջում մեզանից պահանջում են վերջնահաշվարկ, որի համար վիճակախաղով ժամանակը պետք է հանենք ու հին ժամանակի վրա թիվը ֆիքսենք. մոտ 1 մետր շահումով ժամանակը (մեծ խանութներում գուցե մի քանի մետր) մնում է տնօրենի մոտ: Ստացվում է, որ 100, գուցե նաեւ 1000 գնորդ վիճակախաղի պարգեւը շահելու հնարավորությունը կորցնում է»:

Զրուցակիցներս միաբերան պնդում էին, որ «հզոր մատակարարները խանութներին ապրանք տալուց ներկայացնում են օդից վերցված փաստաթղթեր, ու եթե մենք այդ փաստաթղթերը կցենք մեր ֆինանսական հաշվետվությանը, կստացվի, որ մենք աշխատում ենք գերշահույթով, իսկ մատակարարները՝ վնասով»: Օրինակ՝ ապրանքը խանութին տալիս են 100 դրամով ըստ փաստաթղթի, իսկ գումարը վերցնում՝ 200 դրամ: Եվ այդպես էլ մի քանի խոշոր արտադրողներ, իրենց ապրանքը տարբեր անձանց անվամբ են մատակարարում նույն եղանակով, եւ խանութպանները չեն կարող մատակարարից պահանջել այն փաստաթուղթը, որի համաձայն վճարում են ապրանքն ստանալիս: «Երբ հնարավոր կլինի մատակարարից ստանալ այն փաստաթուղթը, որով մենք գնում ենք ըստ իրենց տվյալների, այլ ոչ թե ձեւական, հնարավոր կլինի փակել մի մեծ կոռուպցիոն սողանցք», ասում են նրանք:

Որքան էլ խանութպանները դժգոհում են, սակայն հայկական հնարամտությունը գործում է՝ գնված ապրանքի վերջին զրոները, չգիտես ինչու, կտրոնի վրա չեն տպում: Օրինակ, եթե գնել ես 5400 դրամի ապրանք, ապա քեզ տված կտրոնի վրա հայտնվում է 540 դրամ արժեքը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԻՐԱՑՄԱՆ ԳՈՏԻՆԵՐ

Ո՛չ անօրինականություններին

33-րդ թաղամասի բնակիչների սեփականության հարկադիր օտարման ՀՀ կառավարության 3-րդ որոշումը եւ 7-րդ տարին՝ իրացման ապառնալիքի տակ

Երկար տարիներ չինովնիկների կողմից արհամարհված եւ խաբված քաղաքացիներից իշխանությունները հավանաբար չէին սպասում այնպիսի համախմբված, հետեւողական եւ օրինական պայքար, ինչպիսին ցուցաբերեցին 33-րդ (Ֆիրդուսի) թաղամասի բնակիչները: Ինչպես ասում են՝ «դանակը ոսկորին է հասել»:

«Ազգ»-ը բազմիցս գրել է, որ մինչեւ վերջ հետամուտ է լինելու 33-րդ թաղամասի բնակիչների խնդիրներին: Ինչպես արդեն տեղեկացրել է թերթը, թաղամասի 71 սեփականատեր ՀՀ դատարաններում վիճարկել են ՀՀ ԱԺ-ում մեծ դիմադրությամբ անցկացված «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա ՀՀ կառավարության 25. 0. 2007 թիվ 108 -Ն որոշումը:

«Մենք համարում ենք, որ տվյալ որոշումը հակասում է ՀՀ սահմանադրության 31 հոդվածին, համաձայն որի սեփականության հարկադիր օտարումը կարող է տեղի ունենալ միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում հասարակության եւ պետության կարիքների համար, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Մինչեւ օր մեզ հայտնի չէ, թե ինչ է կառուցվելու մեր օտարվող սեփականության տեղում, հասարակության եւ պետության ո՞ր կարիքների եւ ի՞նչ գերակա հանրային շահերի համար են խանդվում մեր տները: Դա պարզել մեզ չի հաջողվել մինչեւ անգամ դատական ատյաններում:

Հիասնելով արդարադատության հարազատ երկրում, ցավալի է, որ մենք ստիպված եղանք մեր սեփականության իրավունքը պաշտպանելու հույսերը կապել Եվրոդատարանի հետ», ասաց թաղամասի բնակիչների վստահված անձ Անժելա Աղաջանյանը:

Վերջերս թաղամասի 40 սեփականատեր մի այլ միասնական հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան, խնդրելով իրենց պատկանող սեփականության մասով անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 25. 01. 2007 թ. թիվ 108-Ն որոշումը: Դիմումի հիմքում այն փաստն է, որ օրենքով սահմանված՝ մինչեւ սեփականության օտարումը սկսելու վերջնական ժամկետը՝ 2008 թվականի հունվարի 1-ը, նրանց չեն ուղարկվել օտարման պայմանագրերի նախագծեր, ինչի հետեւանքով օրենքի ուժով իրենց սեփականության մասով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության 25. 01. 2007 թիվ 108-Ն որոշումը համարվում է անվավեր:

Սեփականատերերը բողոքում են, որ ՀՀ վարչական դատարանը, ի դեմս դատավոր Ա. Սարգսյանի, երկու անգամ ակնհայտ ձեւական պատճառաբանություններով վերադարձրել է հայցադիմումը եւ այն երրորդ անգամ ներկայացնելուց հետո միայն՝ 13.10. 2008 թ. ընդունել վարույթ: Այնուհետեւ գործով նախնական դատական նիստը նշանակվել է երկու ամիս անց միայն՝ 15. 12. 2008 թ.:

2008-ի նոյեմբերի 20-ին նշված հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի վարույթ ընդունելուց մեկ ամիս եւ յոթ օր հետո, ՀՀ կառավարությունն ընդունել է թիվ 1405-Ն որոշումը, որով սեփականատեր-հայցվորների գույքի օտարումը վերսին ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ հօգուտ նույն ձեռքբերողի, եւ սահմանվել է սեփականության օտարումը սկսելու նոր վերջնաժամկետ՝ 2010 թվականի հունվարի 1-ը:

Սեփականատեր-հայցվորները գտնում են, որ 2008 թ. նոյեմբերի 20-ի թիվ 1405-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը նպատակ է հետապնդել ձախողելու ՀՀ վարչական դատարանի վարույթ ընդունված իրենց հայցի լուծումը: Իսկ ՀՀ վարչական դատարանն իր հերթին այդ նպատակի համար շռայլորեն տրամադրել է ավելի քան բավարար ժամանակամիջոց:

Նշված փաստը սեփականատերերը ներկայացնում են որպես գործադիր իշխանության բացահայտ միջամտություն դատական գործի լուծմանը, ինչը անհամատեղելի է Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների հետ: Նրանք համարում են, որ 2008-ի նոյեմբերի 20-ի թիվ 1405-Ն որոշման հետեւանքով ոտնահարվել է իրենց՝ ՀՀ սահմանադրության 8-րդ եւ 31-րդ հոդվածներով, ինչպես նաեւ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքը:

2008 թ. դեկտեմբերի 15-ին նախնական դատական նիստում սեփականատերերի շահերի պաշտպան փաստաբան Արթուր Գրիգորյանը դիմում է ներկայացրել հայցի հիմքն ու առարկան լրացնելու մասին, որով խնդրել է կիրառել առ ոչինչ ՀՀ կառավարության 20.11. 2008 թ. թիվ 1405-Ն որոշման իրավական հետեւանքները, կամ այն, որպես անօրինական որոշում, ճանաչել անվավեր:

Նույն օրը ՀՀ վարչական դատարանը մերժել է դիմումի ընդունումը, պատճառաբանելով, որ «այն չի բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85 հոդվածի պահանջներից»: Թե ինչու նշված դիմումը «պետք է բխեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85 հոդվածի պահանջներից», դատարանը ոչինչ չի ասել:

Այնուհետեւ՝ 2008-ի դեկտեմբերի 27-ին հայցի հիմքն ու առարկան լրացնելու մասին դիմումի ընդունման մերժումը բողոքարկվել է ՀՀ վարչական դատարանում: Բողոքը մերժվել է, այս անգամ 3 դատավորի կազմով, սեփականատերերի պնդմամբ՝ կրկին ձեւական հիմնավորմամբ:

Սեփականատերերը համաձայն չեն դատարանի որոշմանը եւ 9.01.2009 թ. բողոքարկել են այն ՀՀ վճռաբեկ դատարանում: Նրանք միանգամայն համոզված են, որ ՀՀ վարչական դատարանը միտումնավոր եւ առանց որեւէ իրավական հիմքի զրկում է նրանց ապօրինի որոշումը վիճարկելու հնարավորությունից:

Ա. Ա.

Խմբ. կողմից.- Միանգամայն պարզ է, որ եթե իրացման գործընթացը նախատեսված լիներ արդարացի ձեւով՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ, ապա չէին լինի Երեւանի կենտրոնի բնակիչների այդպիսի զանգվածային բողոքներ, ինչին մենք ականատես եղանք:

AZG NEW 5.QXD 1/27/2009 10:44 PM Page 1

Մեր ազգային կենտրոնները Ռուսաստանում

Հայկական անկյուն Մոսկվայում

Լուսանկարում «Արմենիա» տաղավարն է Համառուսաստանյան ցուցահանդեսային կենտրոնում (ՀՑԿ՝ նախկին ՎԴՀՀ): Ի՞նչ է ձեզ հիշեցնում այս գեղեցիկ ճարտարապետական կառույցը: Ճիշտ է, Գառնիի տաճարը, թեկուզեւ մասնակիորեն: Բայց ոչ, հայերը չեն նախագծել ու կառուցել այն, սա զուտ մոսկովյան հղացք է:

Միասնական պետության քայքայումից հետո նրա տնտեսության երբեմնի նվաճումների ցուցադրման տարածքում, ինչպես առհասարակ Մոսկվայում, իշխում էր անսանձ կոմերցիան. բոլորն էին ձգտում գոյատեւել: Ահա եւ ԱՊՀ գործադիր կոմիտեում գաղափար հղացավ վերականգնել նախկին խորհրդային կայացված են Հայաստանի տասնյակ տարբեր ձեռնարկություններ, որոնց մեջ աչքի են ընկնում գյուղատնտեսական արտադրանք թողարկողները: Այդ «ճյուղի» պատասխանատու **Տիգրան Կոսյանը** այստեղ է աշխատում տաղավարի բացման առաջին օրերից եւ, ինչպես ասում են, իր ավանդն է ներդրել նրա կազմավորման գործում: Նա հավաստում է, որ հայկական մթերքները բարձրորակ են, էկոլոգիապես մաքուր, եւ մոսկվացիներն ու առեւտրականները հաճույքով են ձեռք բերում դրանք: Իր գործունեությամբ տաղավարը էապես նպաստում է հայրենական ապրանքների ճանաչմանը Ռուսաստանում: Գները մատչելի են, քանի արտադրանքը: Այստեղ կարելի է ձեռք բերել ամենաբազմազան իրեր՝ պատրաստված ոսկուց, արծաթից ու մելխիորից, ընդսմին ոչ միայն ավանդական, այլեւ ժամանակակից ոճով: Ցուցադրության տնօրեն **Արծրուն Ղազարյանն** ասում է, որ Երեւանի ոսկերչական գործարանից բացի իրենք համագործակցում են Հայաստանի մոտ 150 միջին ու փոքր ոսկերչական արտադրողների հետ: Եվ «Արմենիան» ոչ միայն աշխատանքով ապահովում է բազմաթիվ հայաստանցիների, այլեւ վերականգնում է հայ վարպետների երբեմնի հռչակը:

Տաղավարն իրոք գրավիչ ազգային կենտրոն է դարձել Ռուսաստանի մայրաքաղաքում: Տարբեր ժամանակներում այստեղ եղել են երկրի պառլամենտի երկու պալատների նախագահներ Սերգեյ Միրոնովը եւ Բորիս Գրիզլովը, Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը եւ բարձրաստիճան այլ անձիք: Հատկապես հաճախ կարելի է այստեղ տեսնել ՌԴ այն նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներին, որոնք ակտիվորեն համագործակցում են Հայաստանի հետ: Իսկ Հայաստանի բոլոր բարձրաստիճան ղեկավարները, որոնք տարբեր առիթներով լինում են Մոսկվայում, անպայման այցելում են այդ «հարազատ օջախը»: Տաղավարում նշվում են նաեւ մեր պետական եւ ազգային տոները, անցկացվում են մամուլի ասուլիսներ, գովազդային միջոցառումներ, շնորհանդեսներ եւ այլն: Ավելորդ է ասել, որ ամենայն սիրով են «Արմենիա» այցելում տեղի հայ համայնքի, ուսանողության, գործարար շրջանակների ներկայացուցիչները:

հանրապետությունների «ներկայացուցչությունը» Մոսկվայում, սակայն նոր քաղաքակիրթ հիմքի վրա՝ նորանկախ պետություններին հնարավորություն տալ տեւական ժամանակով վարձակալելու տաղավար եւ ցուցադրելու կենսագործունեության տարբեր բնագավառների իրենց հաջողությունները: Ավելին, ի տարբերություն անցած ժամանակների, ցուցադրված արտադրանքը կարելի էր վաճառել, պատվիրել, կնքել համաձայնագրեր եւ այլն:

- Ստացվեց այնպես, որ Հայաստանի կառավարությունը հանգուցյալ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի նախաձեռնությամբ առաջիններից մեկը ընդունեց նման որոշում, -պատմում է ՌԴ-ում ՀՀ առեւտրական ներկայացուցիչ **Կարեն Ասոյանը**, որը վերահսկում է «Արմենիայի» գործունեությունը, -եւ 2003 թվականի հունվարին՝ հիմնանորոգումից հետո ՀՑԿ-ում բացվեց ՀՀ ցուցահանդեսային կոնգրես-կենտրոնը: Ի դեպ, մեզ առաջարկեցին մի քանի տաղավար, սակայն մենք ընտրեցինք այս ընդարձակ շինությունը, քանզի իրոք հիշեցնում է մեր հեթանոսական հուշարձանը:

Ասոյանի հետ ծանոթանում ենք ցուցադրություններին: Այստեղ ներ-

Ասոյանը պատմում է, որ ՀՑԿ-ի հետ պայմանագիրը միաժամանակ պարտավորեցնում է ներկայացնել նաեւ տվյալ երկրի պատմությունը, մշակույթը: Տաղավարում գործում է գեղարվեստի մեծ սալոն, որտեղ իրենց աշխատանքներն են ներկայացնում հայ նկարիչները, քանդակագործները, արհեստավորները: Այստեղ իրոք իշխում է ազգային կոլորիտը:

Սալոնի տնօրեն **Խաչատուր Աղամալյանի** խոսքերով, այդ սրահը շատ է սիրված, հաճելի է, երբ անմիջական հնարավորություն ունես գնելու, ասենք, հայկական բնապատկեր կամ հայկական գործ բուն Հայաստանից:

Սակայն ամենից շատ տաղավարում ներկայացված է ոսկերչական նակներում այստեղ եղել են երկրի պառլամենտի երկու պալատների նախագահներ Սերգեյ Միրոնովը եւ Բորիս Գրիզլովը, Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը եւ բարձրաստիճան այլ անձիք: Հատկապես հաճախ կարելի է այստեղ տեսնել ՌԴ այն նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներին, որոնք ակտիվորեն համագործակցում են Հայաստանի հետ: Իսկ Հայաստանի բոլոր բարձրաստիճան ղեկավարները, որոնք տարբեր առիթներով լինում են Մոսկվայում, անպայման այցելում են այդ «հարազատ օջախը»: Տաղավարում նշվում են նաեւ մեր պետական եւ ազգային տոները, անցկացվում են մամուլի ասուլիսներ, գովազդային միջոցառումներ, շնորհանդեսներ եւ այլն: Ավելորդ է ասել, որ ամենայն սիրով են «Արմենիա» այցելում տեղի հայ համայնքի, ուսանողության, գործարար շրջանակների ներկայացուցիչները:

- Մեր աշխատանքում բոլոր սկզբունքային հարցերը համաձայնեցնում ենք ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ, -ասում է Ասոյանը, -իսկ Մոսկվայում սերտորեն համագործակցում ենք ՌԴ-ում ՀՀ դեսպանության հետ: Ի դեպ, դեսպան Արմեն Սմբատյանը հաճախ է իր պաշտոնական հյուրերին հրավիրում մեր տաղավար, որպեսզի վերջիններս ավելի լայն պատկերացում կազմեն հայոց պետության մասին:

Տաղավարի աշխատանքի արդյունավետության մասին է վկայում նաեւ այն փաստը, որ առաջարկություն է ստացվել մասնաճյուղ բացել Եկատերինբուրգում: Արդեն կա նահանգապետի համաձայնությունը:

Եթե երբեւէ լինեք Մոսկվայում, անպայման այցելեք «Արմենիա» տաղավար:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Ջիմի Քարտեր. «Իսրայելում աղետ կլինի, եթե անկախ Պաղեստին չստեղծվի»

ԱՄՆ նախկին նախագահ Ջիմի Քարտերը հայտարարել է, որ Իսրայելը կհայտնվի աղետալի վիճակում, եթե չվերսկսի մերձավորարեւելյան հաշտության բանակցությունները եւ չստեղծի անկախ Պաղեստինի պետություն:

Ասուլիսի ընթացքում նրա գործակալությանը տված հարցազրույցում Քարտերն ասել է, որ արդեն մոտ ապագայում Սուրբ երկրում արաբ բնակչությունը քանակապես կգերազանցի հրեաներին, եւ այդ ժամանակ Իսրայելին կմնա միայն երեք լուծում: «Առաջինն արաբների արտաքսումն է, ինչը էթնիկական զտում է: Երկրորդն արաբներին ձայնից զրկելն է, ինչը կհավասարեցվի ապարթեիդին: Երրորդն արաբներին հավասար իրավունքների տրամադրումն է, այդ թվում՝ ընտրություններում: Դրա շնորհիվ նրանք վաղ թե ուշ կկազմեն մեծամասնություն, նշանակում է՝ այլեւս չի լինի հրեական պետություն», կարծում է Քարտերը:

Նրա խոսքերով, վերջին դեպքում պետության մեջ բոլոր հիմնական որոշումները կընդունեն պաղեստինցիները, որոնք անպայման կքվեարկեն իսրայելցիների համար անընդունելի օրենքների օգտին:

Ջ. Քարտերն Իսրայելին առաջարկում է երկխոսություն սկսել «Համասի» հետ: Նրա պնդման համաձայն, այդ կազմակերպությունը կհամաձայնի Պաղեստինի պետության ստեղծմանը եւ Իսրայելը կճանաչի 1967-ի սահմաններում, եթե պաղեստինցիները հանրաքվեի ժամանակ հանդես գան դրա օգտին:

ՆՈՐ ՅՈՎԵՐ ԴԵՊԻ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Օբամայի առաջին հարցազրույցը՝ արաբական հեռուստալիքին

«Նոր գործընկերության» պատրաստակամություն

Մերձավոր Արեւելքի իրադրության կարգավորման բանակցությունները պետք է վերսկսվեն: Այդ մասին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման երեկ հայտարարել է արաբական «Ալ Արաբիա» հեռուստալիքի եթերում: Դա արտասահմանյան լսարանի համար նոր նախագահի տված առաջին հարցազրույցն է:

«Ես վստահ եմ, իսրայելցիների եւ պաղեստինցիների համար այժմ հարմար պահ է գիտակցելու, որ իրենց բռնած ուղին չի հասցնի երկու ժողովուրդների բարգավաճմանն ու անվտանգությանը», ասել է Օբաման: Նրա խոսքերով, բանակցությունների սեղանի շուրջը նստելու ժամանակն է:

Մերձավորարեւելյան խնդրի կարգավորումը ԱՄՆ նոր վարչակազմի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկն է: Օբամայի խոսքերով, դրա վկայությունը նախկին սենատոր Ջորջ Միտչելի նշանակումն է Մերձավոր Արեւելքում ԱՄՆ հատուկ դեսպանորդի պաշտոնում: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի տվյալներով, Միտչելը երեկ արդեն ժամանել է տարածաշրջան:

Իր հարցազրույցում Օբաման հավաստել է, որ ԱՄՆ ներկայիս վարչակազմը պատրաստ է «նոր գործընկերություն» սկսել մահմեդական երկրների հետ: Միաժամանակ նա ընդգծել է, որ Իսրայելը մնում է ԱՄՆ-ի «կայուն դաշնակիցը»:

Պաշտոնակալությունից հետո օտար լսարանի համար տված առաջին հարցազրույցում Օբաման նաեւ նշել է, որ վարչակազմը մահմեդական աշխարհի հետ հարաբերություններում կօգտագործի առավել համալիր մոտեցում: «Մենք չենք կարող ուշադրության առնել միայն պաղեստինա-իսրայելական հակամարտությունը եւ չմտածել, թե ինչ է կատարվում Սիրիայում, Իրանում, Լիբանանում, Աֆղանստանում կամ Պակիստանում: Այդ հարցերը փոխկապակցված են», ասել է Օբաման, ավելացնելով, որ վերջին հաշվով իսրայելցիներն ու պաղեստինցիներն իրենք պետք է որոշեն իրենց անելիքը:

Դուբայում գործող «Ալ Արաբիա» արբանյակային հեռուստալիքը դիտողների թիվը մոտ 23 միլիոն է: «Նյու Յորք թայմս» թերթը 2005-ին գրեց, որ «Ալ Արաբիայի» սեփականատերը Սաուդյան Արաբիայի թագավորի փեսան է՝ շեյխ Վալիդ ալ Իբրահիմը:

Քարոզարշավի ընթացքում Օբաման 500 խոստում է տվել

«Ազգ» հունվարի 22-ի համարում «Նախագահ Օբամայի ելույթը հաշվենկատ էր, հավասարակշիռ, ուստի եւ հուսադրող դարձավ ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ աշխարհի բազմաթիվ ժողովուրդների համար» վերնագրով անդրադարձել էր նրա պաշտոնակալության արարողությանը: Ըստ ամենայնի, Օբամայի ելույթը նաեւ անկեղծ էր, որ նա առաջին հարցազրույցը տվել է «Ալ Արաբիա» հեռուստատեսությանը, հղելով իսլամական աշխարհի հետեւյալ ուղերձը. «Ամերիկացիները ձեր թշնամին չեն»: Նույն հարցազրույցում նա ձեռք մեկնելու պատրաստակամությամբ դրական ազդանշաններ է հաղորդել Իրանին:

Ուղերձն ու ազդանշանը Բարաք Օբամայի նախընտրական քարոզարշավի ընթացքում տված խոստումներից են: Ինչպես երեւում է, սանձնելով ԱՄՆ նախագահի պաշտոնը, նա խոսքից գործի է անցել: Օբամայի պաշտոնակալությունից 3 օր հետո կայքէջ է բացվել, որտեղ, ինչպես նշում է Ֆլորիդայում հրապարակվող «Սանկտ Պետերբուրգ թայմս» թերթը, շարադրվել են քարոզարշավի ընթացքում նրա տված 500 խոստումներն ու տեղեկություններ տրվել խոստումների կատարման ընթացքի մասին:

Ըստ տեղեկության, կայքէջում ԱՄՆ նորընտիր նախագահի խոստումներից 7-ի դիմաց գրված է «կատարվել է», 1-ի՝ «կասեցվեց-սառեցվեց», 14-ի՝ «կատարման փուլում է», իսկ 488-ի՝ «կատարման ուղղությամբ դեռեւս ոչինչ չի ձեռնարկվել» մակագրությունները:

Հ. Ջ.

Իլինոյսի սենատը նահանգապետի պաշտոնանկության գործընթաց է սկսել

Իլինոյսի նահանգի սենատում երեկ սկսվել է նահանգապետ Ռոդ Բլագոեւիչի պաշտոնանկության գործընթացը: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ Բլագոեւիչը ներկա չի եղել լսումներին:

Լսումների առաջին օրը դատախազ Դեւիդ Էլլիսը խոսացել է սենատորներին ներկայացնել ապացույցներ, որ Բլագոեւիչը քանիցս գերազանցել է սեփական լիազորությունները եւ չարաշահել է ծառայողական դիրքը:

Դատախազը նաեւ մտադրություն է հայտնել լսումների հրավիրել ՀԴԲ գործակալներից մեկին: Վերջինս ձայնագրել է նահանգապետի այն հայտարարությունը, որտեղ նա նախկին սենատոր Բարաք Օբամայի թափուր տեղի համար խոշոր գումար պահանջելու մտադրություն է արտահայտում:

2008-ի դեկտեմբերի 9-ին Բլագոեւիչին ներկայացվել էին կաշառակերության մեղադրանքներ, իսկ նահանգային սենատը որոշել է սկսել նահանգապետի պաշտոնանկության գործընթաց:

Ինչ վերաբերում է նորընտիր նախագահ Բարաք Օբամային, մոտ ժամանակներս նա արտերկրում իր առաջին պաշտոնական ուղեւորությունը կկատարի դեպի Կանադա:

AZG NEW 7.QXD 1/28/2009 5:47 PM Page 1

ԱԶԳ **Մարզական**

Լիլիթ Գալոյան. «Ներքին ձայնս հուշում էր, որ կրկնելու եմ հաջողությունս»

Շախմատի Հայաստանի կանանց առաջնությունում իր վստահ ելույթներով աչքի ընկավ միջազգային վարպետ Լիլիթ Գալոյանը՝ երկրորդ տարին անընդմեջ արժանանալով չեմպիոնուհու տիտղոսին: Այսօր նա «Ազգի» հյուրն է:

- Լիլիթ, շնորհավորում եմ չեմպիոնուհու տիտղոսը պահպանելու առթիվ: Կարծում եմ, գոհ ես ելույթիցդ:

- Շնորհակալություն: Ընդհանրապես, մրցաշարերի մեկնարկում մշտապես հուզվում եմ եւ դա ազդում է ելույթիս վրա: Այս անգամ էլ առաջին տուրում ոչ-ոքի խաղացի Անի Խանամիրյանի հետ, իսկ հետո արդեն մնացած պարտիաներում վստահ հանդես եկա ու 9 հնարավորից վաստակեցի 7,5 միավոր: Նաեւ հոգեբանական առումով: Մինչ այդ 2-րդ եւ 3-րդ մրցանակակիր էի դարձել ՀՀ առաջնություններում ու ձգտում էի անպայման 1-ին տեղ զբաղեցնել: Իսկ այս տարի ինձ ավելի վստահ էի զգում, ներքին ձայնս հուշում էր, որ կրկնելու եմ հաջողությունը:

- Իսկ չէի՞ր վախենում, որ անհաջող ելույթի դեպքում անհատական վարկանիշդ զգալիորեն կնվազեցնեիր:

- Նման վախ յուրաքանչյուրի մոտ էլ կա: Սակայն եթե վախենալով խաղաս, շախմատում դժվար է հաջողության հասնել:

- Ընդհանրապես ուժեղագույն շախմատիստուհիներն ինչո՞ւ են հրաժարվում Հայաստանի առաջնությունների մասնակցությունից: Հնարավո՞ր է, հետագայում դու էլ նրանց օրինակին հետեւես:

- Դժվարանում եմ կոնկրետ պատասխան տալ: Պատճառները տարբեր են: Կարծում եմ, դա եւ անհատական վարկանիշը չնվազեցնելու ձգտումն է եւ առանձնակի խթանի բացակայությունը: Օրինակ, ես այս տարի խաղացի զուտ այն բանի համար, որ հոգեպես հանգիստ էի, քանի որ հավակնում տեղս ունեմ: Պարզապես ցանկանում էի խաղալ եւ ուժերս փորձել: Նույն մասնակիցների հետ հանդիպելուց արդեն հոգնում ես, միմյանց լավ եմք ճանաչում, գիտեմք խաղային ունակությունների մասին: Միջազգային մրցաշարերում ես ավելի հանգիստ ու վստահ եմ զգում ինձ, տրամադրվում եմ պայքարի: Իսկ այստեղ գուցե ինչ-որ բաներ խանգարում են: Նշեմ, որ մրցաշարից ուժեղագույնների հրաժարվելը հնարավորություն է ընձեռում ավելի երիտասարդներին փորձելու ուժերը Հայաստանի առաջնությունում:

- Ինչպիսի՞ տպավորություն թողեցին նրանք այս մրցաշարում:

- Ճիշտ է, թեեւ բարձր արդյունքների չհասան, սակայն զգացվում է, որ լրջորեն են պարապում: Ոմանք իրենց վարկանիշի համեմատ ավելի ուժեղ են խաղում: Պարզապես այստեղ այնքան էլ հնարավորություն չունեն վարկանիշը բարձրացնելու: Դրա համար անհրաժեշտ է միջազգային մրցաշարերի շատ մասնակցել: Բացի այդ էլ, այնպիսի տարիքում են, որ շատերը սովորում են, ինչը եւս նրանցից մեծ ժամանակ է խլում:

- Իսկ դու նման հոգսերից ազատվա՞ծ ես:

- Ոչ այնքան: Սովորում եմ ֆիզկուլտուրայի ինստիտուտի մարզական ժուռնալիստիկայի ֆակուլտետում, միաժամանակ շախմատ եմ դասավանդում ճարտարագիտական համալսարանում:

- Քո կարծիքով, ո՞րն է պատճառը, որ Հայաստանում կանայք շախմատում այնպիսի նվաճումների չեն հասել, ինչպես տղամարդիկ:

- Հայաստանում շախմատով զբաղվող աղջիկների քանակը փոքր է: Շատ ծնողներ պատրաստ չեն շախմատիստ աղջիկ ունենալու, երեւի մտածելով, թե նրանք իմքնամփոփ կդառնան, ուղեղները կծանրաբեռնեն: Բայց դա այդպես չէ: Մեր թե՛ տղաների, թե՛ կանանց հավաքականի անդամները շատ կենսուրախ, արտիստիկ ու հումորով անձնավորություններ են: Մենք պարզապես հանրության առջեւ ենք այդպես համեստ ու լուռ: Օրինակ, մեր շախմատիստուհիներն իրենց հաստատումներով տարբերվում են վրացիներից: Վերջիններս պայքարող շախմատիստուհիներ են, ուժեղ շախմատ են խաղում ոչ միայն ինտելեկտի, այլեւ բնավորության շնորհիվ: Ցավոք, հերթափոխը դանդաղ է աճում: Ժամանակին Հայաստանի կանանց առաջնություններում պայքարն ավելի թեժ էր: Եթե տարիներ առաջ լինեին ներկայիս նոպաստավոր պայմաններն, ապա միջազգային վարպետների ու գրոսմայստերների թիվն անհամեմատ մեծ կլիներ:

- Շախմատը բեզանից շա՞տ ժամանակ է խլում:

- Եղել են ամիսներ, որ նույնիսկ մեկ ժամ շախմատով չեմ զբաղվել, ինտերնետով էլ չեմ հետեւել շախմատային իրադարձություններին: Սակայն լինում է ժամանակահատված, որ սկսում եմ լրջորեն պարապել, հատկապես երբ պատրաստվում եմ մրցաշարերին: Դա զուտ իմ մարդկային բնույթից է, բնավորությունից: Չեմ կարողանում տեղավորվել ինչ-որ չափանիշների, սահմանների մեջ: Սակայն հավակնում հանդես գալը պարտավորեցնող է, ուստի որոշակի ժամանակահատված հատկացնում եմ շախմատին:

- Ի՞նչ նոպատակներ ես դրել քո առջեւ շախմատում:

- Քանի որ ուրանց եմ խաղում, աշխատում եմ լրացուցիչ նոպատակներով ինձ չծանրաբեռնել: Պարզապես իմ առջեւ նոպատակ եմ դնում յուրաքանչյուր պարտիայում հասնել առավելագույնին: Իսկ եթե դա ինձ հաջողվի, ապա նվաճումների կհասնեմ:

Հավակնորդների ցանկը հայտնի է

Ֆուտբոլի Աֆրիկայի կոնֆեդերացիան որոշել է «սեւ մայրցամաքի» լավագույն ֆուտբոլիստի տիտղոսի երեք հավակնորդներին: Նրանք են Մայքլ Էսիենը (Գանայի հավաքական, «Չելսի»), Էմանուել Ադեբայորը (Տոգո, «Արսենալ») եւ Մոհամեդ Աբուտրիկան (Եգիպտոս, «Ալ Ահլի»):

Աֆրիկայի լավագույն երիտասարդ ֆուտբոլիստի մրցանակին հավակնում են Սալոմոն Կալուն (Կոտ դ'Իվուար, «Չելսի»), Վիկտոր Օբինյան (Նիգերիա, «Ինտեր») եւ Ստեֆան Մբիան (Կամերուն, «Ռեն»): Լավագույն հավաքականի մրցանակի հավակնորդներն են Եգիպտոսը, Կամերունն ու Նիգերիան, իսկ լավագույն մարզչի տիտղոսին հավակնում են Հասան Շահատը (Եգիպտոսի հավաքական), Մանուել Խոսեն («Ալ Ահլի») եւ Ալան Կվեմբլոն-Գեդուն («Կոտոնսպորտ»): Մրցանակաբաշխությունը տեղի կունենա Լագոսում փետրվարի 10-ին:

ՁՅՈՒԴՈ

Լավագույնը Ռոբերտ Վարդանյանի ելույթն էր

Թբիլիսիում անցկացված ձյուդոյի աշխարհի գավաթի խաղարկության առաջին փուլում հանդես եկան Հայաստանը ներկայացնող 7 ձյուդոյիստներ: Բոլորից հաջող հանդես եկավ Ռոբերտ Վարդանյանը: Նա մինչեւ 73 կգ քաշային մրցավեճում գրավեց 5-րդ տեղը: Լավագույն ութնյակում տեղ զբաղեցրեց նաեւ Հակոբ Առաքելյանը, որը մինչեւ 90 կգ քաշային կարգում 7-րդն էր:

Աղջիկների մրցաշարին մասնակցած Անուշ Հակոբյանը առաջին իսկ գոտեմարտում պարտություն կրեց: Հոլանդիա են մեկնել մեր պատանի ձյուդոյիստները՝ մասնակցելու հունվարի 28-ին մեկնարկող միջազգային մրցաշարի:

Ջյուդոյի միջազգային ֆեդերացիան հրապարակել է ըստ քաշային կարգերի ուժեղագույն ձյուդոյիստների դասակարգման ցուցակը: Պեկինի օլիմպիադայի մասնակից Արմեն Նազարյանը մինչեւ 66 կգ քաշային կարգում զբաղեցնում է պատվավոր 4-րդ տեղը: 60 կգ քաշային կարգում մեր մյուս օլիմպիականը՝ Հովհաննես Դավթյանը 23-րդն է: Հակոբ Առաքելյանը (90 կգ) 70-րդն է, իսկ Ղազարոս Գրիգորյանը զբաղեցնում է 104-րդ տեղը:

Մոզլին նվաճեց չեմպիոնական գոտին

Քաշային երեք կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Շեյն Մոզլին նվաճեց WBA-ի վարկածով կիսամիջին քաշային կարգի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: 37-ամյա բռնցքամարտիկը Լոս Անջելեսում կայացած մենամարտում հաղթեց չեմպիոնական գոտու տեր Անտոնիո Մարգարիտոյին:

Մենամարտի առաջին կեսն անցավ Շեյն Մոզլիի առավելությամբ, որն ավելի հաբվենկաս էր գործում: Սակայն Մարգարիտոյին հաջողվեց հավասարեցնել հաշիվը: 8-րդ ռաունդում Մոզլին հուժկու հարվածով նոկդաունի ենթարկեց մրցակցին: Շարունակելով ակտիվ գործողությունները, Մոզլին 9-րդ ռաունդում եւս հարվածի տակ էր պահում մրցակցին: Հերթական ուժգին հարվածից հետո Մարգարիտոյի մարտավարները որոշեցին դադարեցնել մենամարտը: Շեյն Մոզլիի օգտին տեխնիկական նոկաուտով հաղթանակ գրանցվեց:

Մենամարտից հետո Մոզլին հայտարարել է, որ ցանկանում է ուժեղ մրցակիցների հետ մրցել: Նա առաջինն էր, որ Մարգարիտոյին պարտության մատնեց տեխնիկական նոկաուտով: Ի դեպ, Կալիֆորնիայի նահանգի մարզական հանձնախումբը պետք է ուսումնասիրի գիպսի նմանվող այն առարկան, որը հայտնաբերվել էր մեքսիկացի Մարգարիտոյի ձեռնոցներում մենամարտին նախապատրաստվելիս: Դա հայտնաբերել էր Մոզլիի մարզիչ Նազիմ Ռիչարդսոնը: Նա հանդերձարանում ուշադրություն էր դարձրել, թե ինչպես է բռունցքները բինտով փաթաթում Մարգարիտոն: Նրա պահանջով ստուգել էին Մարգարիտոյին եւ հայտնաբերել էին գիպսին նմանվող ինչ որ առարկա:

Անի Վարդանյանը վերջին տեղում է

Հելսինկիում ավարտված գեղասահքի Եվրոպայի առաջնությունում Հայաստանի 2-րդ պատվիրակն էլ չափազանց թույլ հանդես եկավ ու գրավեց վերջին տեղը: Կանանց մենասահքի մրցումներում Անի Վարդանյանը կարճ ծրագրի կատարումից հետո վաստակեց ընդամենը 18,62 միավոր եւ 40 մասնակիցների մեջ եզրափակեց աղյուսակը: Անին չկարողացավ մտնել եզրափակիչ փուլ, որում պայքարը շարունակելու իրավունք էին ստանում լավագույն արդյունքի հասած 22 գեղասահորդուհիները: Հիշեցնենք, որ տղամարդկանց մենասահքում էլ Գեղամ Վարդանյանն էր գրավել վերջին տեղը:

Հոդկինսը ձգտում է ռեւանշի

Միջին քաշում աշխարհի նախկին բացարձակ չեմպիոն, 43-ամյա ամերիկացի բռնցքամարտիկ Բեռնարդ Հոդկինսը հայտարարել է, որ միայն Ջո Կալզագեի հետ մենամարտելու դեպքում է պատրաստ կրկին ռինգ վերադառնալ: Վերջինիս նա պարտվել էր անցած տարվա ապրիլին: Հոդկինսը պատրաստ է ռեւանշ-մենամարտն անցկացնել նույնիսկ Կալզագեի հայրենիքում՝ Ուելսում:

«Ես ռինգ կվերադառնամ, եթե հնարավոր լինի Ջո Կալզագեի հետ պայմանավորվել գարնանը կամ ամռանը մենամարտ անցկացնելու վերաբերյալ: Դա միակ մենամարտն է, որ ինչ-որ բան նշանակում է բռնցքամարտի եւ իմ համար: Սակայն Ջոն եւս պետք է ցանկություն ունենա կրկին ռինգ դուրս գալու ինձ հետ: Ես արդեն տեղեկացրել եմ իմ ներկայացուցիչներին, որ մենամարտը պետք է անցկացվի ֆինանսական տեսակետից շահավետ վայրում: Պատրաստ եմ մենամարտել նրա ընտրած տեղում», հայտարարել է Բեռնարդ Հոդկինսը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW 6.QXD 1/28/2009 5:42 PM Page 1

Ժորժ Գազազյան. «Երաժշտությունն իմ մեջ է հնչում եւ բոլոր լեզուներով»

Տարիքը դեռ ոչանեկան էլ չէր, երբ սկսեց երգել. երաժշտություն կար նրա մեջ ու այդ կերոջ էր արտահայտվում: Գործիք ունենար՝ նաեւ կնվագեր: Հիմա, երբ արդեն կյանքի հինգերորդ տասնամյակում է, հարուստ է երաժշտական գործիքների նրա հավաքածուն՝ նվագարանների քանակը չորս տասնյակն անցնում է: Վերջինը մի հին ուդ է: «Վերնիսաժից», Երեւանում ձեռք է բերել եւ տեղում էլ տվել սղոցելու. միեւնույն է, գործիքը նորոգման կարիք ուներ եւ պարտադիր կսղոցվեր Եգիպտոսում, որտեղ ծնվել ու աճում է կոմպոզիտոր-կատարող **Ժորժ Գազազյանը:**

«Իմ մեջ երգիչն առավել վառ է արտահայտված, բայց ավելի ստեղծագործելու կարիք ունեմ: Երաժշտությունը գալիս է ներսից ու պիտի հնչի-կատարվի: Այլ կերոջ անհնար է», սա Գազազյանի երեկվա ու այսօրվա կյանքն է, որ ինքը համարում է ճամփորդի կյանք: Սակայն իր ճամփորդությունները մեծաթիվ տարբերվում են ընդունվածից՝ մեզ հայտնիներից: Գազազյանի բազմաբնույթ ու բազմաբովանդակ ճամփորդությունների միջոցը նվագարանն է՝ ուդը, տարածքը՝ երաժշտությունն ու մտածողությունը, ընկերակիցը ունկնդիրներն են: Նրանց ընկալումը պակաս դեր չի կատարում երաժշտի գոհունակությունը ամբողջացնելու հարցում: Այս առումով հայաստանյան ընկերակիցներից՝ ունկնդրից Ժորժ Գազազյանը տպավորված է. «Նվագարանները, որոնցով կատարվեցին գործերս երեւանյան համերգներում, մի փոքր այլ հնչողությամբ, բայց ծանոթ է հայ ունկնդրին, եւ ամենեւին չէի մտահոգվում, թե ինչպես կընկալվի: Եվ ճիշտ դուրս եկա»:

Ինքը՝ կոմպոզիտոր-կատարողը իր ստեղծած երաժշտությանն անուն չի տալիս ու կատակով այն կոչում է իր ազգանվամբ՝ «գազազյանական». «Շատ լայն է ու բազմազան իմ երաժշտության էթնիկ հիմքը եւ այդ բոլորում էլ կա սեփական ընկալումս: Բայց դա ոչ մի դեռքում էթնիկ հիմքի աղճատում չի նշանակում: Կարծում եմ, այն ինչ վերցնում ես, պիտի չշեղես իր տեսակից, բայց եւ նոր երանգներ պիտի ներկայացնես, այլապես անիմաստ կդառնա արածդ եւ հեռու՝ ստեղծագործություն կոչվելուց»:

Գազազյանը նաեւ կինոյի լեզուն է հասկանում եւ երաժշտություն է գրել արդեն մի քանի ֆիլմերի համար: Համարում է, որ երաժշտությունն ինքնին ամբողջական է, բայց կարող է լրացվել պատկերաշարով ու, միաժամանակ, այն առավել բովանդակալի դարձնել անգամ վավերագրական ֆիլմերում, որոնցում էլ նրա մասնակցությունը ծանրակշիռ է: Ֆիլմերի համար նրա երաժշտությունը ստեղծվում է որպես պատկերաշարի ամբողջացում եւ հաճախ էլ պատկերաշարն է հարմարեցվում երաժշտությանը: Սա նրա աշխատաոճն է: Գազազյանն ունի իր երաժշտությանն ու մտածողությանը հարազատ երաժիշտ գործընկերներ, բայց յուրաքանչյուր համերգ ու ալբոմ նվագում, ձայնագրում է նոր խմբի հետ, քանի որ իր ստեղծագործությունները հին ու նորի, ավանդարդի ու էթնիկի միացություն է եւ կրողը՝ համաշխարհային երաժշտական ժառանգության: Հենց դա էլ կոմպոզիտոր-կատարողի կարծիքով իր հաջողության գրավականն է: Իսկ հաջողությունը՝ հանդիսատեսի բուռն ընդունելությունը ցուցիչ է եղել հատկապես Հնդկաստանում եւ Գերմանիայում:

«Հնդկաստանում գործիքներն ու հնչողությունը ծանոթ էին, ավելին՝ հարազատ, իսկ Գերմանիայում լիովին անհայտ ու նոր: Երկու երկրներում էլ ունկնդիրը մեծ ոգեւորություն պարգեւեց մեզ՝ երաժիշտներիս այդչափ արտառուչ ընդունելությամբ», պատմեց Ժորժ Գազազյանը: Նա հնի ու նորի համակցություն է անում ոչ միայն երաժշտական ժանրերի, այլեւ անվանման հարցում: «Դարիա ջազ» ալբոմն, օրինակ՝ ջազի եւ էթնիկ տարբեր երաժշտությունների միաձույլ տարբերակ է, իսկ անվանումը՝ դարիա, որ նույնն է թե ծով, օվկիանոս եւ երաժշտական գործիքի անվանում նույնպես համակցություն է: Երաժիշտը ստեղծագործական հաճախականության մասին խոսել չի սիրում, բայց եւ գործով գիտի, որ յուրաքանչյուր գործ ներսից է բխում եւ հնչողություն ու բովանդակություն ստանում արտաքին ազդակների շնորհիվ: Նման հոգեվիճակ է ստեղծվել նրա համար Հայաստանում, ուր ամեն ինչ հարազատ ու նոր համարելով, Գազազյանը մտածում է կրկին համերգով հանդես գալու մասին եւ գուցե հենց հայաստանյան ոգեշնչման արդյունքում ծնվելիք գործերով:

«Երբ գալիս էի Երեւան, մտավախություն ունեի, որ իմ հայերենը հասկանալի չի լինի ու լսելիք հայերենն էլ իմ ականջին օտար կլինի, բայց իզուր՝ ինչպես հայկական երաժշտությունը, այդպես էլ մանկության տարիներին տանը լսած, մանկապարտեզում սովորած հայերենս հասկանալի են», ոչ գառված սահունությամբ, բայց լիովին հասկանալի ու գեղեցիկ հնչողությամբ ասաց Ժորժ Գազազյանը երեւանյան համերգին հաջորդած զրույցում:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողի դատին է հանձնված «Հայոց անմահության խորհուրդը» մենագրությունը

Երեկ Թեֆեյան մշակութային միությունում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Ատոմ Մելքոնյանի՝ «Հայոց անմահության խորհուրդը» գրքույկի շնորհանդեսն էր: Միջոցառմանը ներկա էին պատմաբաններ, մտավորականներ, ուսանողներ, ինչպես նաեւ ԹՄՄ տեղի եւ սփյուռքի անդամներ:

ԹՄՄ նախագահ Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց Ա. Մելքոնյանին՝ նշելով, որ մենագրությունը եկող սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելու լավագույն միջոց է: Պատմաբան Վլադիմիր Բարխուդարյանն էլ իր գոհունակությունը հայտնեց՝ նկատելով, որ գրքույկում շեշտը դրված է հայրենասիրական ոգու վրա:

Վարդան Ուզունյանը, ով Թեֆեյան կենտրոնի եւ Լոնդոնի «Թեֆեյան խնամակալ մարմնի» ատենապետն է, իր ուրախությունը հայտնեց հովանավորության համար՝ ընդգծելով, որ նման գրքեր ու ֆիլմեր միշտ էլ հարկավոր են հայ ընթերցողին: Հետաքրքրական էր ԹՄՄ համատեղնախագահ Երվանդ Ազատյանի խոսքը: Վերջինս պատմեց, որ Ա. Մելքոնյանը իրեն ասել է, որ մինչեւ Արեւմտյան Հայաստանում լինելը գրում էր Ղեւոնդ Ալիշանի ոգով՝ առանց տեսնելու իրական Արեւմտյան Հայաստանը. «Բայց, երբ 6 անգամ այցելություն կատարեց Արեւմտյան Հայաստան եւ բարձրացավ Արարատի գագաթ, հետաքրքրական մոտեցում ցուցաբերեց: Ատոմը հեղինակ չէ, ուղղակի հաղթող գիտնական: Մենք չունենք արտասահմանում նման պատմաբան, ով լավ գիտի Արեւմտյան Հայաստանի պատմությունը»:

2007-ի օգոստոսի 10-ին՝ հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող Սեւրի դաշնագրի օրը, 5165 մ բարձրությանը հասնելու բարեբախտությունը հեղինակին մղել է գրելու սույն գրքույկը: Հեղինակի խոսքերով՝ ի տարբերություն իր մյուս մենագրությունների, հաշվի առնելով նյութի յուրահատկությունը, այս աշխատության համար ընտրել է ինքնատիպ ոճ: Ա. Մելքոնյանի կարծիքով, այդօրինակ ոճի ընտրությունը լավ հնարավորություն է գիրքն ավելի մեծ լսարանի հասցեագրելու եւ հայրենի բնաբխարհին ու պատմությանը հատկապես երիտասարդ սերնդին հաղորդակից դարձնելու համար: Հետազոտության մեջ ինքնության են առնված Արարատ-Մասիսի հետ կապված ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում տեղ գտած պատմական դրվագները, աշխարհի տարբեր ծայրերից եկած բազմաթիվ ուխտավորների թողած ուղեգրությունների տպավորությունները:

Մենագրության մեջ զետեղված են հարյուրից ավելի նկարներ՝ միջնադարյան հեղինակների գծանկարներ, Մասիս բարձրացած անձանց, սույն գրքի հեղինակի հետ արշավախմբի մասնակիցների կատարած լուսանկարներ ու ուղեգրական նոթեր:

Աշխատությանը կից հեղինակը պատրաստել է նաեւ մոտ 1 ժամ տեւողությամբ եւ վավերագրական ֆիլմ՝ նախատեսված ինչպես գիտական, այնպես էլ ընթերցող լայն հասարակության համար:

Ն. Մ.

Հրավառություն «Թռչունյան տանը»

Մեկ անգամ չէ, որ **«Ազգը»** անդրադարձել է Գյումրիում գործող «Թռչունյան տուն» անունը կրող մանկատանը, որի անունը կապված է բարերար հանգուցյալ Վահան Թռչունյանի հետ, որը 1915 թվի ջարդերից մազապուրծ Վանից հասել էր Գյումրի եւ ապաստանել ամերիկյան որբանոցներից մեկում: Բախտի անիվը նրան գցել էր ԱՄՆ, մահկանացուն կնքելուց առաջ 270 հազար ԱՄՆ դոլար էր թողել, փափագով՝ գտնել այն շենքը, ուր ինքը սան էր եղել, ու այնտեղ հիմնել որբանոց: Երջանկահիշատակ Մեսրոպ սրբազանը կատարել է Թռչունյանի կտակը, եւ այսօր Գյումրիի Ղարսի խճուղու 3/1 հասցեում գործում է «Թռչունյան տուն» կրթօջախը:

Հունվարի 26-ին Թռչունյան տան սաները հյուրընկալեցին առաջին տիկին Ռիտա Սարգսյանին, լուսահոգի վարչապետի տիկնոջը՝ Սուսաննա Մարգարյանին եւ վարչապետի տիկին Գոհար Սարգսյանին, որոնք այլ երեւելի տիկնանց ուղեկցությամբ, երեխաների սիրելի երգիչների հետ, նվերներով այցելեցին մանուկներին: Հյուրերը շրջեցին շենքում, դասարաններում, եղան երաժշտության, գորգագործության ու նկարչության եւ այլ խմբակներում:

Այնուհետեւ նրանք մասնակցեցին երեխաների համերգին, ուրախացան, երգեցին ու պարեցին սաների հետ:

Տիկին Սարգսյանը սիրեց մանուկներին եւ սիրվեց ու ընդունվեց վերջիններիս կողմից: Նրա անմիջական ջփումը մանուկների հետ այնքան անբռնազբոս էր, անկեղծ ու ջերմ, որը մանուկները փոխադարձեցին հրճվանքով, ուրախությամբ, երգով ու պարով:

Առաջին տիկինը իր խոսքում ասաց, թե շատ էր լսել «Թռչունյան տան» մասին, սակայն իր տեսածը գերազանցեց սպասումները: Տիկին Սարգսյանը գնահատանքի խոսք ուղղեց ողջ սփյուռքին, որը միշտ սատարում է հայրենիքին. «...Ուրախալի է, երեխաներ, որ դուք շրջապատված եք մարդկանցով, որոնք անում են ամեն ինչ, որպեսզի դուք զգաք ձեզ մի մեծ համերաշխ ընտանիքում: Գաղտնիք չէ, որ այս ամենը իրականանում է շնորհիվ մեր հայրենակիցների, հատկապես «Գյուլբենկյան հիմնադրամի», հանձին Զավեն Եկավյանի, մի խումբ դեսպանների, հանձինս Հերման Խնդիրյանի, քուվեյթաբնակ Սարգիս Արսլանյանի եւ այլոց: Եվ ինչպես ինձ հուշեցին՝ ձեր մյուս կնքահայրերի: Այս մարդիկ մանկատան լավ բարեկամներն ու հովանավորներն են, ուզում եմ նրանք իմանան, որ մենք տեսնում եւ գնահատում ենք նրանց աշխատանքը»:

«Թռչունյան տունը» շատ ու շատ հյուրեր է ընդունել, ելույթներով հանդես է եկել թե՛ Գյումրիում, թե՛ Երեւանում, մասնակցել զանազան մրցույթների, միշտ ստեղծելով բարձր տրամադրություն: Սակայն այսպիսի խանդավառություն, ջերմություն ու անկեղծություն այս դահլիճում դեռ չէր եղել, ուստի հանդիպումը անվանենք «հրավառություն»:

ՌՈՒԲԵՆ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՖՐԱՆՍԻԱ

Հայկական մշակութային միամսյակը՝ Լիմոժում

Ֆրանսիայի Լիմոժ քաղաքում հունվարի 23-ին մեկնարկել է Հայկական մշակութային միամսյակը: Համաձայն ՀՀ արտգործնախարարության մամուլի վարչության տեղեկությունների, այն սկսվել է Լիմոժի քաղաքային գրադարանի ընդարձակ սրահում բացված «Հայաստան. հիսունյա երկիր Կովկասում» ցուցահանդեսով, որին ներկա էին Լիմուզինի շրջանային խորհրդի եւ Լիմոժի քաղաքային խորհրդի ղեկավարներ, պատգամավորներ, քաղաքապետեր, տեղական հասարակության հարյուրավոր ներկայացուցիչներ: Հայկական մշակութային միամսյակի բացման հանդիսավոր արարողությունն սկսվել է Լիմոժի կոնսերվատորիայի պատանի սաների կատարմամբ հնչած Հայաստանի օրհներգով եւ Կոմիտասի ստեղծագործություններով: Ողջույնի ելույթներ են ունեցել Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր, Լիմոժի առաջին փոխքաղաքապետ տիկին Մոնիկ Բուլեստենը եւ Հայաստանի դեսպանության ժամանակավոր հավատարմատար Համլետ Գասպարյանը: Ցուցահանդեսը հին ու ժամանակակից քարտեզների, գեղարվեստական ու կիրառական իրերի, արխիվային ու նոր լուսանկարների, հնաբիտ հրատարակությունների եւ նոր ժամանակների մասին պատմող նյութերով ներկայացնում է Հայաստանի անցյալն ու ներկան, այնտեղ բնակվող մարդկանց՝ հայերի ու ազգային փոքրամասնությունների առօրյան: Հայկական մշակութային միամսյակն ընդգրկում է դասական ու ժամանակակից երաժշտության համերգներ, ասմունք, հայկական թեմաներով ֆրանսիական գեղարվեստական ու վավերագրական ֆիլմերի ցուցադրություններ, Հայաստանի, հայ ժողովրդի մասին բանախոսություններ եւ կլոր սեղաններ: Այն տեւելու է մինչեւ փետրվարի 28-ը:

Միամսյակը կազմակերպվել է Լիմոժի քաղաքային իշխանությունների աջակցությամբ եւ «Կովկաս-Հայաստան պլյուս» հասարակական կազմակերպության ջանքերով: Մոտ 140 հազար բնակիչ ունեցող Լիմոժը Լիմուզին շրջանի վարչական կենտրոնն է, որը հայտնի է համաշխարհային հռչակ ունեցող իր հախճապակիով: Լիմոժում թեեւ գրեթե հայեր չկան, սակայն վերջին տարիներին տեղի հասարակությունը, համալսարանական եւ ուսանողական շրջանակները, ինչպես նաեւ ագրարային սեկտորը սկսել են հետաքրքրություն ցուցաբերել Հայաստանի նկատմամբ: Կազմակերպվում են ճանաչողական ուղեւորություններ, իրականացվում՝ հիդրոէներգետիկայի, անասնաբուծության ու ձկնաբուծության բնագավառներում փոքր ծրագրեր:

Ն. Պ.

AZG NEW 8.QXD 1/28/2009 5:46 PM Page 1

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի Վերլուծությունների բաժնի ***«Վերլուծաբան»*** *թափուր աշխատատեղի համալրման համար:*

Աշխատանքի նպատակն է. Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետության բարձրացում: Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեպքերի բացահայտման ՖԴԿ վերլուծական ունակությունների զարգացում, կիրառում եւ հետաքննության մարմինների համար դրանց կիրառելիության ապահովում: Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեպքերի բացահայտման ունակությունների զարգացման տեսանկյունից հաշվետվություն տրամադրող անձանց կողմից օրենքների եւ կարգերի պահանջների հիման վրա ինստիտուցիոնալ կարողությունների ձեւավորման նպաստում:

Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.

Ուսումնասիրում է պարբերաբար ներկայացվող եւ կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններ:

Հավաքագրում է կասկածելի գործարքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, կազմում գործարքների մասին տեղեկանքներ, ըստ սահմանված կարգի գնահատում է ստացված տեղեկատվությունը, ապահովում դրա հետագա քայլերի իրականացման համար ընդունելի հիմքեր եւ անհրաժեշտության դեպքում կազմում դրանց վերաբերյալ տեղեկատվություն՝ քրեական հետաքննում իրականացնող մարմիններին ուղարկելու համար, ստանում է ուղարկված կասկածելի գործարքների հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:

Մասնակցում է ՓԼ/ԱՖ դեպքերի տիպաբանությունների ուսումնասիրման, դրանց բացահայտման մեթոդաբանության զարգացման ու համապատասխան բնութագրիչների բացահայտման աշխատանքներին:

Ներկայացնում է վերլուծությունների համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվության հավաքագրման վերաբերյալ հաշվետվությունների մեջ փոփոխություններ, ինչպես նաեւ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական ակտերում լրամշակումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ:

Կատարում է հաշվետվություն տրամադրող անձանց կողմից ստացվող տեղեկատվության ծավալի եւ որակի համեմատական վերլուծություն:

Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.

Բարձրագույն տնտեսագիտական/իրավաբանական կրթության պարագայում՝ 6 ամսվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկից դուրս (ֆինանսական ոլորտում):

Բարձրագույն ոչ մասնագիտական կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 1.5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկից դուրս (ֆինանսական ոլորտում):

Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում՝ բանկային գործ (խորացված), բանկային օրենսդրություն եւ նորմատիվ դաշտ (խորացված), փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենք, կարգեր եւ միջազգային ստանդարտներ (խորացված), փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման տիպաբանություն եւ մեթոդաբանություն (խորացված), հաշվետվություն տրամադրող անձանց գործունեությունը կարգավորող օրենսդրություն (միջանկյալ), տնտեսագիտության տեսություն (միջանկյալ), հաշվապահություն (ներածական), իրավունքի տեսություն (ներածական), քրեական եւ քրեական դատավարության օրենսդրություն (ներածական)

Լեզուների իմացություն՝ հայերենի, անգլերենի, ռուսերենի ազատ տիրապետում

Անհրաժեշտ հմտություններ՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office, Internet):

Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝ 2009թ. փետրվարի 12-ը

Աշխատավարձը՝ 149 500 դրամ

Պահանջվող փաստաթղթերը.

Դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում- www.cba.am , «Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում):

Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով:

Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www.cba.am) կամ տրվում է Կենտրոնական բանկում:

Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 եւ 26-23 (ներքին):

Հասարակայնության հետ կապերի ծառայություն

ԽՍՏՈՐԵՆ ՊԱՀՊԱՆԵԼ ԳԱԶԻ ՍԱՐՔԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

«Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միությունը նպատակահարմարության տեսանկյունից հայտնում է, որ բնական գազի՝ սարքավորումներից օգտվելուց առաջ պետք է օդափոխել շինությունը, որտեղ տեղադրված են գազի սարքավորումները:

Նախքան օգտվելը ստուգել ծխնելույզի քարշի առկայությունը միեւնույն ժամանակ հորիզոնական թիթեղյա խողովակների միացումները, քարշի առկայության դեպքում միայն օգտվել գազի սարքերից:

Ծխաօդափոխության ուղիների բացակայությունը, սխալ տեղադրումը, անսարքությունը, քարշի նվազեցումը կարող են ծանր ողբերգությունների եւ դժբախտ դեպքերի առիթ դառնալ:

Ծխնելույզների քարշի թուլության, խցանման կամ բացակայության ժամանակ գազի թերայրման հետեւանքով առաջանում է ածխածնի օքսիդ /շմոլ գազ/, որն ուժեղ թունավոր գազ է եւ դրա աննշան քանակության առկայությունը շինությունում կարող է թունավորման պատճառ դառնալ:

Խորհուրդ է տրվում նման դեպքում անմիջապես մարել ծխնելույզները եւ նոր միայն օգտագործել գազասարքերը: Ծխնելույզների մաքրման եւ վերանորոգման աշխատանքները կատարում են նաեւ «Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության տարածքային տնտեսական ընկերությունները:

Համաձայն բնական գազի օգտագործման կանոնների պահանջների՝ ջերմամեկուսացված բեռոնի բլոկներից եւ ազբոցեմենտի խողովակից պատրաստված ծխնելույզները պետք է մաքրվեն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ իսկ աղյուսից տարին չորս անգամ:

Չի թույլատրվում հատկապես բազմաբնակարան շենքերի ծխնելույզները բնակիչների կողմից ինքնուրույն փոփոխությունների ենթարկել, մաքրել ու վերանորոգել, դրանով կարող են զրկել իրենց եւ հարեւաններին ծխնելույզների ճիշտ շահագործումից՝ ստեղծելով դժբախտ դեպքերի առիթներ:

Չի թույլատրվում օգտվել ջրատաքացուցիչից օդի բարձր ջերմաստիճանի եւ ուժեղ քամու ժամանակ:

Խորհուրդ է տրվում տանից դուրս գալուց անջատել բոլոր էլեկտրասարքավորումները, փակել սնող գազախողովակների վրա տեղադրված խցանային փականները:

Ծխնելույզի մաքրման, վերանորոգման, ինչպես նաեւ տեխնիկական թույլտվության ակտեր ստանալու համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 443432

Սիրելի հայրենակիցներ, հոդվածը ընթերցելիս այն ընկալեք որպես նպատակահարմարության տեսանկյուն:

«Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միության խորհուրդ:
ՈՉ պաշտոնական հրապարակում

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

Օրենսդրական նորություններ Պարզաբանումներ Խորհրդատվություն

Էկոնոմիկա եւ Իրավունք- ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

Բաժանորդագրվելու համար զանգահարեք ***54-24-81, 54-74-81***

Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը հունվարի 27-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց «Փաստաբանների, ինչպես նաեւ իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի եւ իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 020 հաշվետվական ձեւը, տրամադրման կարգը եւ ժամկետները, փաստաբանների, ինչպես նաեւ իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի եւ իրավաբանական անձանց հաշվառման կարգը», «Ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 024 հաշվետվական ձեւը, տրամադրման կարգը եւ ժամկետները, ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց հաշվառման կարգը», «Իրավաբանական անձանց գրանցող մարմնի (պետական ռեգիստր) կողմից պարտադիր տեղեկացման ենթակա եւ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 008 հաշվետվական ձեւը, տրամադրման կարգը եւ ժամկետները, իրավաբանական անձանց գրանցող մարմնի (պետական ռեգիստր) հաշվառման կարգը», «Անհատ ձեռնարկատեր աուդիտորների եւ աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների եւ հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 025 հաշվետվական ձեւը, տրամադրման կարգը եւ ժամկետները, անհատ ձեռնարկատեր աուդիտորների եւ աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր հաշվապահների եւ հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց հաշվառման կարգը», «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա եւ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման թիվ 009 հաշվետվական ձեւը, տրամադրման կարգը եւ ժամկետները, Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվառման կարգը», «Բանկերի ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի (ղեկավարի) որակավորման» կարգը, «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրվող վիճակագրության ձեւը, բովանդակությունը, տրամադրման ժամկետները եւ կարգը»:

Խորհրդի որոշմամբ փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը եւ հրապարակումը» կանոնակարգ 3-ում եւ «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգում: Փոփոխություններ կատարվեցին ԿԲ խորհրդի 31.07.2008 թ. թիվ 236 Ն որոշմամբ հաստատված «Հաշվետվություն տրամադրող անձանց կողմից պարտադիր տեղեկացման եւ կասկածելի գործարքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման (թիվ 007 հաշվետվական ձեւ)» ձեւում եւ դրա լրացման ուղեցույցում:

ԿԲ կառավարման բարձրագույն մարմնի որոշմամբ «ԷՆ ՋԻ ԲԻ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրվեց, իսկ «ՍԱՆՌԱՅՍ» ՍՊԸ-ի փոխանակման կետի արտարժույթի առուվաճառքի թիվ 739 լիցենզիան վերաձեւակերպվեց:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեւան քաղաքի Արաբկիրի թաղապետարանը (պատվիրատու) ԵԱԹ-Գ/Հ-ԱՊՁԲ-2/09 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ Արաբկիրի թաղապետարանի համար **համակարգչային տեխնիկայի եւ համալրող սարքերի ձեռք բերման նպատակով**: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ փոխանցել «Զարգացման Հայկական բանկ» հ/հ 1810052137053312, «Ալասան» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչեւ 8-րդ աշխատանքային օրվա ժամը 10-ը դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Զարյան 27, 417 սենյակ, հեռ.՝ 28-19-11:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա:

Հայտերը պետք է ներկայացվեն մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10-ը:

Արաբկիրի թաղապետարան

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

մեկ սենյականոց բնակարան Տիգրան Մեծ պողոտայում: Արեւկող է, կահավորված, ապահովված է տաք եւ սառը մշտական ջրով:

Զանգահարել 57-62-67, (091) 01-69-17:

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

տարածք 90 քմ նորոգված, սանհանգույցով, կենտրոնական նոտարի հարեւանությամբ: Առանց միջնորդի:

Հեռ. (091) 40-33-38

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 27.01.2009, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Նոյյան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: